

ՀԱՄՈ  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ

Ա Շ Գ Ի Տ Ա Լ Ի Զ Մ Ի  
Ա Խ Հ Ա Վ Ա Ս Ա Ր Ա Զ Ա Փ  
Զ Ա Ր Գ Ի Ց Մ Ա Վ Ա Ն  
Հ Ա Ր Ց Ի Ց Ո Ւ Ր Զ Ը

Պ

Ե Տ Ր Ա Տ  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն  
1 9 8 6

110504 | Young keelwale  
young keelwale  
at the first day of  
young keelwale  
young keelwale

330.14  
3

ՀԱՅՈ ՀՈՎՀԱՆՆԻԿԱՅԱ

ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ Հ 1961 թ

# ԿԱՊԻՏԱՆԱԴՐԻ

## ԱՇԱՎԱՍՐԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԽԾՈՅՑԻ

二〇二〇年八月




ԳՐԱՎԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՏԵՐԵՆ

Տեխ. խմբ. Տ. Խորչվանցյան  
Արքագրիկ Ա. Շահբազյան

Փ

Գետնաշատի առաւելան  
Քլավլիս 235. պատվեր 715.  
Հքառ. 3338 տիրաժ 2000

A II  
10504



2792

Կապիտալիզմի պարմաններում առանձին ձեռնարկությունների, ճյուղերի և յերկրների անհավասարաշատի զարդացումն ընդունաբան, վորագես ակնառու եմպիրիկ փաստ, հազիվ թե կարող եւ վեճի առարկա դառնալ վորեն մեկի կողմից։ Այդ փաստն այնքան չոչափելի յէ, վոր առանձին ջանք չի պահանջվում ընկունելու համար։ Ուստի զարմանալի չէ, վոր հենց բուրժուական տնտեսազետների մոտ, սկսած արժանահարզու լիբերալ զորառնից և վերջացրած Փաշիզմի թեմի տակ աշխատող Բեռլինի կոնյուկտորային ինստիտուտի տնտեսազետներով, կարելի յէ գտնել բազմաթիվ պերճախոռ նյութեր, վորոնք կապիտալիզմի անհավասարաշատի զարդացումն են ցույց տալիս և ապացուցում։ Սակայն՝ այսուղ ևս բուրժուական տնտեսազետների զժրախտությունն այն ե, վոր նրանք իրենց նեղ մտահոգունով ուղղակի անկարող են տեսականորեն ըմբանել արդ կարգի տօլյալները, վերջիններից բոլոր բոլոր յեղբակացությունների հետ միասին։

Ամեն կերպ զանց առնել, անդիտանալ կապիտալիզմի ճակատագրի համար այս պրոբլեմի ունեցած եյտական նշանակությունը, չտեսնել նրա մեջ հատուկ կապիտալիտական վոչ մի առանձին բան, անհավասարաշատի զարդացումը կապիտալիզմի որենք վորակելու համար չընդունել և վոչ մի հիմք—ահա ի՞նչն ե բնորոշում ամեն գույնի քողարկված կամ մերկապարանոց ապոլովետների ընդհանուր դիրքը։ Նրանք պատրաստ են որենք համարելու անհավասարաշատի զարդացումը, սակայն նրա պատմականության բոլոր կողմերը վոչնչացնելու պարմանով, որենք, սակայն վոչ կապիտալիզմին հատուկ, այլ մարդկային բոլոր հասարակությունների համար հավիտենական և անփոփոխ։ Յեզ

զա համականալի յեւ, վորովհետեւ ովոչ մի բան այնքան բնորոշ չէ բուրժուայի համար, քան ժամանակակակից կարգերի զծեռը բոլոր ժամանակների և ժողովուրդների վրա փոխանցելը» (Լենին, «Сочинения» համ. I, եջ 73):

Այս այս անսակետից յերբեք պատահական չեւ, վոր ամենասուր ապօղեան, հակառեղափոշիական Տրոցկին զնաց հենց այդ վերջին գծով: Տակավին 1915 թվին իր «Новый Голос»-ում, ուսարկելով կապիտալիզմի անհավասարաշատ զարգացման որենքի լենինյան մեկնարանության գեմ, դեռ իր «Февральская революция»-ի մեջ հայտարարելով այս որենքը վորպես «антизапад» ընդհանուր որենք պատմական պըսոցեսի» (Լ. Տրոցկի, «Февральская революция», եջ 22), նաև Կոմիսարատական Խնտերնացիանալի Գործկոմի 7-րդ պլենումում այս վերջին կետից ել սկսեց իր փորձերը՝ նվազեցնելու և փաստորեն բացանելու արդ որենքի նշանակությունը: Նա այստեղ, անամոթարար թաղնվելով Լենինի թիկունքում, փորձում եր հերքել հենց Լենինի այն գրույթը, թե՝ չանտեսական և քաղաքական զարգացման անհավասարաշափությունը կապիտալիզմի անդայման որենքն եւ (համ. XVIII, եջ 232): Բայց Տրոցկու, անհավասարաշատ զարգացման որենքն իմակերիակիզմի որենքը չեւ, դա մարդկային ամրող պատմության որենքն եւ» («Путь мировой революции», եջ 99):

Բուրժուադիան ինչո՞ւ չպետք եւ յերկու ձեռքով ստորադրի Տրոցկու այսպիսի դրույթի տակ. չե՞ վոր դա ըստ եյության կոչված եւ սպեցիֆիկ կապիտալիստական որինացափությունները, հետեւապես նաև կապիտալիզմը, հավերժացնելու կամ նրա հավերժացման պատճանք ստեղծենուու:

Սակայն քնննենց բուրժուատ-որոշիլիստական այս լարախաղացությունը նրա մեխոդով գնակական հիմքերի անսակետից:

Եեթե մետաֆիզիկի ռոխելով՝ ստեմանափակվելինե՞ յերևույթների և փաստերի մեջ ընդհանուրը վորանելով ու առանձնացնելով, այն ժամանակ այդ փաստերն ու յերևույթներն անփուսափելի կերպով դուրս են գալիս նման, ավելին՝ միանգամայն նույնը: Ահա թե ինչու Մարքսը խստորեն դեմ եր դուրս զալիս հա-

արտկական յերեսութիւնների և որինաչափությունների քննության արդպիսի ձևերին, մերկացնելով բուրժուական տնտեսագետների մեթոդոլոգիայի ամրող աղղողութեալ առաւալը:

Մարգան, իհարկե, չեք ժխտում ընդհանուրի կատեղորիայի որինկարի նշանաւկությունը, առկային նա արդ ընդունում եր միուրին առանձնահատուկի հետ միասնաբար: «Քաղաքատեսության քննադատության չուրջը» աշխատության մեջ Մարգան ուղղակի ընդունում և «արտադրություն ընդհանրապես» արշուակացիայի «իմաստը» (ան'ս «Քաղաքատեսության քննադատության չուրջը», եջ 11) և «որինակ՝ «Քաղիտարշի» 1 հատորի 5-րդ զվարում ինչը քննում և աշխատանքն ընդհանրապես: Սակայն նա արդ ամենն անում և նրա համար, վորագեղի ազելի պարզ ցույց տա և ընդզծի կալիտայիշաւական արտադրության առանձնահատկությունը, կազիտամշխորմի ժամանակ աշխատանքային զործունեյության հասարակական ձևի ազեցիֆիկի լինելը: Այլ կերպ՝ «կարող մն առաջադրին միայն ընդհանուր գրությունը և բոլոր պատմական արցրերությունները կարող են... խառնվել և լինվել համամարդկային որենքների մեջ» («Քաղաքատեսության քննադատության չուրջը», եջ 13):

Ծիստ նույն կերպ՝ ինչպես տրոցիկները զարգացման անհավասարաչափության որենքը հարսարարում են վորպես համամարդկային որենք, կարելի յե, որինակ, աշխատանքի բաժանումն ևս համարել այդպիսին: Նման փորձ կատարել և Պրուդոնը, արժանանալով Մարգան սուր ծաղրանքին: «Աշխատանքի բաժանումը, —զբում եր Մարգան, —պարոն Պրուդոնի կարծիքով համբանական որենք ե, հասարակ և վերացական մի կատեղութիւն: Նա հետեւապես արարակցիայի, իդեայի, խոսքի մեջ պիտք ե գտնի պատմության տարրեր դարձարժաններում յեղած աշխատանքի բաժանման բավարար բացարձությունը: Կատարաները, ցեխերը, մանուֆակտուրան և խոշոր արդյունաբերությունը պեսօք և բացարձին մի քառովից բաժանում: Լավ ուսումնասիրեցներ գրամանեցի բառի իմաստը և դուք կարիք չեք ունենա այլնև հետազոտելու այն բաղմաթիվ աղղեցությունները, մորոնք յուրաքանչյուր դարձարժանում աշխատանքի բաժանմա-

նը տուիս հն վորոշակի բնույթ» («Հիպետա ֆիլոսօֆի», էջ՝ 119): Պրուդոնը խաղում եր «քաժանեց բառի հետ, իսկ Տրոց-կին խաղում ե անհավասարաշատ» բառի հետ: Ի՞նչ տարրերու-թյուն կա այստեղ և ինչո՞վ ավելի տափակամիտ չե Տրոցկու մետաֆիզիկական արտարակցիան Պրուդոնի նույնանձան արշ-տրակցիայից:

Գեղանու Տրոցկին այնքան գութաշանորեն վորոնալով դար-դացման անհավասարաշատիության «ընդհանուր», «Ժարգիկին» պատմությանը որենքի թիզը, իւարկե, բնավ չեր ընդգծում դարձուցման անհավասարաշատիության առանձնահատկություն-ները կազիտալիզմի ժամանակ ընդհանրապես ու նրա իմազերիա-լիստական, վերջին շրջանում մասնավորապես և չեր ել ուղղում մտածել այդպիսի ընդգծման անհրաժեշտության մասին: Ընդ-հակառակը, ինչպես կտեսնենք հետազայում, զարգացման ան-հավասարաշափությունն առաջ քաշելով վորպես համամարդ-կացին որենք, Տրոցկին դրանով իսկ ամեն կերպ ձգտում եր դի-մազութիւ զարմենը կազիտալիզմի անհավասարաշատի զարգաց-ման որենքը, նվազեցնել կամ արհամարհել նրա եյությունը և նշանակությունը, նրա գործողությունը և հետևանքները մոնո-պոլիստական կազիտալիզմի ժամանակ:

Անկատեմ ե, վոր կասպիտալիզմին նախորդող հասարակա-կան-անանեսական ֆորմացիաներին նույնպես խորթ չեր զար-դացման անհավասարաշափությունը: Անտիկ աշխարհում իրենց տնօնեառության ու կուլտուրայի զարգացման աստիճանով աչքի եյին ընկնում Աթենքը, Հռոմը և այլն: Ենիւ աշա, յեթե աշքա-թող անենք ամյալ հասարակական ֆորմացիայի բնորոշ կողմե-րը — արտադրության՝ յնդանակը և նրա վրա հիմնվող սորկա-տիրական կարգերի դասակարգային կրտսեցվածքը, յեթե նկա-տի չունենանք, վոր արտադրողական ուժերի զարգացման ցածր աստիճանով պայմանավորվում եր այն չափազանց ուժեղ աղդեցությունը, վոր ունեյին աշխարհառողբական պայմաններն աշխարհի տարբեր բնակված կետերի անհավասարաշատի զար-դացման վրա, ասպա, իւարկե, միանորամայն անկարելի յի ըմ-բռնել այդ անհավասարաշափության ամբողջ առանձնահատու-կությունը:

Որինակ՝ վերցնենք հին Հռոմը։ Արտադրողական ուժերի զարգացման այն ժամանակվա պայմաններում Հռոմի աշխարհագրական գիրքը շատ հարմար եր առևտութական հարաբերությունների զարգացման և նվաճողական պատերազմներ մղելու տեսակետից, պատերազմներ, վորոնք հնարավորություն երին տալիս Հռոմին ապահովելու իրեն մեծ քանակությամբ ստրուկտուվով։ Սակայն յերբ ստրկական աշխատանքի վրա հիմնված հսկայական լատիֆուլդիանները քայլարյունին Հռոմի ուղղական հղորության պատվանդան հանդիսացող ազատ հողագործներին, այն ժամանակ Հռոմեական կայսրությունը թուլացավ։ Նա այլ ևս չեր կարող հաղթական պատերազմներ մղել ստրուկտուվության վերջինիքը, ոտիսված յեղավ տեղի տալ մեր ժամանակակից բարբարոսներ հիտլերների և գյորինազների նախահայրերի — զերմանական հորդաների առաջ։

Ահա՝ յեթե այս կարգի բոլոր հանդամանքները, վորպես դոյություն չունեցող, թողնենք մի կողմ և այլ ճանապարհով մեռք բերված անհեթեթ, վոչ-զիտական արստրակցիան զարձնենք արտույուտ, հրամցնենք վորպես համամարդկային որենք և անրածենք բոլոր հասարակական-անհետական Փորմացիանների վրա, այն ժամանակ մեղ պարագուքալ կթվա, թե ինչո՞ւ մենք կարող ենք խոսել և պետք և խոսենք կապիտալիզմի անհավասարաշտի զարգացման հատուկ որենքի և որյենկուլորեն նրա հետ կապված ու նրանից բլիստ յեղբակացությունների մասին։

Վերընում մենք արգեն մատնանշեցինք, վոր ըուլորովին պատահական չե հականեղափակիոխական Տրոցիու ձգառմը՝ բացառել կապիտալիզմի անհավասարաշտի զարգացման հատուկ որենքը։ Բոլոր ունեղատներն այս կամ այն ճանապարհով աշխատում են հաշվի անենել այլ անանեսական որենքի հետ, ամենից առաջ այդ հավիտնական որենք զարձնելու մտադրությամբ։ Յեկ այդ հականալի յե, վորովհետև, ինչպես մենք ցույց կտանք իր տեղում, այլ որենքը վոչ մի կերպ չի կապակցվում ուշորակիցիալիզմի ապոլոդետիկ զարանցանքների հետ։

Վերցնենք հենց կառւցկում՝ ունեղատների զաղափարական ներշնչողին ու առաջնորդչին։ Նա իր բարձաթիվ աշխատություններում կամ բոլորովին զանց և առնում այլպիսի որենքի գո-

յությունը, կամ ձեռքից վոչ մի տոկիր բաց էի թողնում, վորուսողի գրչի մի հարվածով վոչնչացնի նրա նշանակությունը, նկատելով այն վորպիս վոչ հատուկ, վոչիմանենա կազիտամութին:

Աղքարային հարցի վերաբերյալ իր վաղեմի վորոշ աշխատությունների մեջ կառուցկին ընդհանուր առմամբ կարծես թե աշխատում եր ճիշտ մատենալ արդյունաբերության և դյուզատնուեսության ունժավառարաջափ զարգացման բացարձությունը, կազիտայիզմի ժամանակ դյուզատնուեսության հետ մնալու ինդրին, կարծես թե ուզում եր քավել իր պատահեկության շրջանի մայթուսական մեղքեցը: Սակայն այդ ամենը նաև մոռացության ավելց իր ունեղատական շրջանը բոլորելիս:

Կառուցկին այս անգամ սկսեց խիստ գնազիտորեն բացատրել պյուղանահետության հետ մնալու փաստը կազիտայիզմի ըրջանում: Արբնակ, իր «Ձինանասական» կազիտալ և ճշնաժամերը հոդավածում նա պյում և. «Գյուղատնահետական արտադրության ընդգարձակումը տեղի յեւ ունենում միանդամայն այլ պարմանեներում, քան արդյունաբերական արտադրության ընդարձակումը և հատկապես մեքենաների գործածության ժամանակից սկսած՝ պարմանեների մեջ յեղած այդ տարբերությունն եւ ավելի յեւ մեծանում: Արդյունաբերությունը կարող ե ճիշտ ավելի արագ զարգացնել իր արտադրությունը, իսկ դյուղատնուեսությունը ընդգարձակման ահմազը հետ և մոռւմ, վորավիենուն վերջինն զործ ունի կենդանի որդամիզմների հետ, չի կարգ բնականութիւն արագացնել նրանց բազմացումը և ամբ...» (ընդզեռումը մերն և. Հ. Հ.): Նույն միացը, միայն ավելի քողարկված ձևով, կառուցկին արտահայտում և իր սոցիալ-ֆաշիստական մանումնենաը հանդիսացնդ «Պատմության մատերիալիստական ըմբռնությունը գրքում: «Գյուղատնահետությունը, պյում և նաև, ոսկի բնական պանմանմերավ արդեմ ի վիճակի չեւ գարգանալու արդյունաբերություն պիտ անունուզ: Սրան ավելանում և նաև այն հանդամանքը, վոր մինչև այսոր կազիտալ Ծուել և դեպի գյուղատնահետությունն ավելի դանդաղ, քան դեպի արդյունաբերությունը» (ուռւ. Հրատ. եջ 552):

Եեթէ նկատի ունենանք, վոր կառուցկին դյուղատնահետության հետ մնալու վերաբերյալ իր բացատրությունների փաստարկումն 8

սկսում և գրնական պատճառներից», ապա պարզ և զարնում, վոր նրա վերջին Փրազը միայն աչքը թող վահելու համար և, վոր նա իրականում հաստատվել և նորից իր հիմավուրց հոգեհոր՝ Մալթուսի գրկում: ԶԵ՞ վոր սահմանափակվել միայն այն փառտի ընդդժմամբ, թե զեսպի զյուղատնտերությունը դանդաղ և հոսում կապիտալը, առանց լուսարանելու այլ փաստի սոցիալ-անահական հիմքը, այլ միևնույն և, թե վոշինչ շասել:

Կապիտալը զանգաղ և հօսում զեսպի զյուղատնտեսությունը, վորովհետեւ զոյություն սմբեն այնպիսի արգելակներ, ինչպես և ունտան և, առաջին հերթին՝ արտույուտ ունտան: Հողերի ազգայնացման արարական հնարավորությունը և այդ հիման վրա բացարձակ ունտացյի վոշնչացումը կապիտալիզմի շրջանակներում չի կարող իրականություն դառնալ, վորովհետեւ կապիտալն իր շվաքից վախենում և, նաև չի համարձակվում ձեռք բարձրացնել մասնավոր սեփականության դեմ, թեկուղ հենց այլ սահմաններում, չնայած վոր դա նրա համար ձեռնառ կլիներ. իսկ հողմեյին և կապիտալիստական մաղնատների անձնական կապն ու միությունը հանդիս են զայիս վորպես լրացուցիչ փաստարկում, վորը խոսում և նման սիսկից հրաժարվելու ողաբին: Հասկանալի յէ, իհարկե, վոր արդ ամենի մեջ գրնական պատճառներց պործ չունեն, չնայելով կառուցկու բոլոր հավաստիացումներին:

Կառուցկու մյուս, ավելի բացահայտ զինակիցները, ինչպես որինակ, սոցիալ-Փաշխոտական անվանի առբարազետ Բառակն, ուղղակի և բացահայտորեն կանոնում են հողի նվազող բերքիության առաջ որենքի հին, քրքրմած դրոշի տակ, մի որենք, վորն այնքան խստորեն ժխտեց Մարքու:

Կառուցկու ի՞նչ զործն և, վոր Փեռվակիզմի ժամանակ բոլորովին այլ կերպարանք ունեն գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման անհավասարաչափությունը, վոր այն ժամանակ գյուղատնտեսությունն իր արտադրողականությամբ առաջ եր մանր արհեստային արդյունաբերությունից և վոր արտադրողականության զարգացման աեմպում միայն իուզոր կապիտալիստական արդյունաբերությունը շատ հետ թողեց գյուղատնտեսությունը: Այդպիսի փաստը թելադրում և պատճակա-

նորեն մոտենալ տպյալ յերևույթին, վորպեսզի կարելի լինի ճիշտ կերպով պարզել, թե ինչո՞ւ միևնույն բնական պատճառները Փեղալիզմի և կապիտալիզմի ժամանակ արամագծներն հակառակ ներգործություն ունեյին արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման տեմզի վրա:

Ֆեղալական հասարակության արամագծողական ուժերի հենց շածր աստիճանն եր, վոր գերազանություն եր տալիս գյուղատնտեսության այն ժամանակվա արդյունաբերության համեմատությամբ: «Արտադրության կապիտալիստական յեղանակի զարգացման շածր աստիճանում, —զրում եր Մարքսը, —հողադրությունը հանդիսանում ե ավելի արտադրողական, քան արդյունաբերությունը, վորովհետեւ այստեղ աշխատանքի մեջ բնությունն ե, վոր մասնակցում ե վորպես մեջնա և որպանիզմ, մինչդեռ արդյունաբերության մեջ բնության ուժերը զրեթե ամբողջությամբ պետք ե գենաւ փոխարինովելին մարդկային ուժավ...» («Թեորիա պրա�օնություն» Համ. II, առաջին մաս, եջ 191):

Կառուցկին, սակայն, վոչ մի կերպ չի կամքնել այլպիսի կոնկրետ-պատմական հողի վրա՝ գյուղատնտեսություն և արդյունաբերության անհավասարաշատի զարգացման պատճառները բացատրելիս: Չե՞ վոր այն ժամանակ նա ստիրված պետք ե լինի վնասել գյուղատնտեսության հետ մնայու պատճառները կապիտալիզմի ժամանակ, նրա սպեցիֆիկ, մասնավոր-սեփականատիրական հարաբերությունների մեջ և, հետեւապես, ընդունել, վոր հենց պարտադրության բուրժուական յեղանակին ե հասուկ ավելի արագորեն զարգացնել արդյունաբերությունը, քան հողադրությունը» («Թեորիա...», II Համ., առաջին մաս, եջ 176): Իսկ արդ կնշանակեր վորոշակի տուրքտալ, թեկուզ արդ գծով և այդ սահմանում, կապիտալիզմի անհավասարաշատի զարգացման հատուկ որենքի որյեկտիվ նշանակությանը: Յեզ ահա կառուցկին, բուրժուազիայի այդ զարամացմանը, ամեն կերպ ճիզ և թափում ցատկել բուրժուազիայի համար այնքան անցանկայի այդ որենքի վրայից, նրան չկապտեց արդյունաբերության և գյուղատնտեսության ան-

Համասարաջառի զարգացումը և ամուր կերպով կառջելով՝ քննական պատճառներին»:

Ունեղաների աշխակապությունն այստեղ բոլորովին գըտվար չե յերեան հանել։ Նրանք անտես են առնում, արհամարհում են մարդու զմի հիմնադիրների այն բաղմաթիվ ընդդեմները, թե ինչպես հասարակական որինաչափությունները, այսպես ել քրնական պատճառները—բնության որինաչափությունները, պետք ել վերցնել վոչ թե իրենց ստատիկ վիճակում, այլ շարժման և փոփոխության մեջ։ Նրանց այնուհետեւ չկամ ենալով հաշմի առնել, վոր անթույլատրելի յե նույնացնել կամ փոխուրինել մեկը մյուսով բնության և հասարակության վորակապես տարրեր որինաչափությունները, իրենց սարգած համբառենապես շանուփոխաց բնության որենքներով բացատրում են հասարակական յերեսույթները, ինչպես, որինակ, ամյալ գեպքում, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման անհավասարաչափությունը կնոպիտալիզմի ժամանակ։

Ենդեւսը հենց այդպիսի ապոլովետների դեմ եր գըռում, թե զեկո համար այսպես կոչված տնտեսական որենքները բնության համբառենական որինքներ չեն, այլ հանդիսանում են պատճական որինքներ, վորոնք ծագում են և անհետանում։ Ժամանակակից քաղաքանականության կողեքը, ինչ չափով վորտնտեսապետները կազմել են այն որյեկտիվորեն ճիշտ, մեզ համար հանդիսանում ե միայն այնպիսի որենքների և պարմաների ժողովածու, վորոնց սրոք ժամանակակակից հասարակությունը կարող ե զոյսություն ունենալ։ Մի խոսքով, սա բռնժուական հասարակության վերացական արտաշայտությունն ե, ոեզրումնեն («Հանրագումաշը») նրա արտաքրության և փոխանակության պայմանների» («ՊԱՍՄԱ Մարկս և Թիգելիս», եջ 162):

Զնույնացնել հասարակական զարգացման որենքները բնության որենքների հետ, մոտենալ նրանց խիստ պատճականութեն, վերցնել դրանք իրենց փոփոխության և զարգացման մեջ, յերբեք աշխաթող շանել, վոր յուրաքանչյուր հասարակականական փորմացիա ունի շարժման իր հատուկ որենքները—

ահա Հասարակական որինաշատությունների դիմուկների կական-մատերիալիստական Հասկացողության Հիմնական դըռությունները՝ մի բան, վոր յեցրեք չեն կամենում Հասկանալ արոցիկների և կառուցիկների պես իսկական մետաֆիզիկները:

Վորոնալով այն ընդհանուր տեղին, թե զարգացման անհավասարաշափությունը հատուկ և մարդկային ամբողջ պատ-մությանը և կամ բնության համբխանական մի որենք հայտա-բարելով անհավասարաշափ զարգացումը՝ այդ հիման վրա բա-ցանել կապիտալիզմի անհավասարաշափ զարգացման հատուկ որենքը—եւ ուրիշ ի՞նչը կարող ե ավելի վաստ մինել և ի՞նչը կա-րող ե առաջ բերել ավելի մեծ, արդարացի արհամարհանք:

ԶԵ՞ վոր նույն ջազիով կարելի յեր Համբերժացնել արժեքը (ի մըջի այլոց՝ այս ասովարիզումն ել բավականաշափ շատ են ջանք թափողները): ՄԵ՞թե արժեքը Հրապարակ չեր պալիս կա-պիտալիզմից շատ առաջ, ճիշտ և, պատահական կերպով (սորածիչք), ինչպես պատահական եր ինքն առքանձգափո-խանակությունը: Յեկ մի՞թե այդ փառուց խանզարում և մեղ արժեքի որենքը նկատել վորպես արտադրության կապիտալի-տական յեղանակի շարժման որենք: «Արանեղ պարզվում է, — գրում եր Մարքուր՝ թե ինչպես անդամ արտադրության ավելի վաղ յեղանակներին վերաբերող տնտեսական կատեգորիաներն արտադրության կապիտալիտատական յեղանակի Հիմն վրա ըն-դունում են առանձնահատուկ կերպով տարրեր պատմական բնա-վօրություն» («Գրապարակված ձեռուգրեր», «Вольшевик» № 56, էջ 81, 1932 թ.):

Թեսկեա և զարգացման անհավասարաշափությունը Հավասա-րապես նույն կերպ գոյություն և ունեցել նաև այլ հատուրա-կական-անտեսական Փորմացիաներում, այսուամենայնիվ նա Հանդիսանում և կապիտալիզմի որենքը և դրա մեջ վոչ մի ա-ռանձին Հանձնուկային բան չկա: Հասարակական որինաշափու-թյունների դիմուկների կամ մատերիալիտատական Հասկացողու-թյան տեսակետից: Յեկ ահա, ով չի կամենում Հասկանալ այս ճշմարտությունները, նա զերադաշտում է կանոննել Համամարդ-կային որենքներ ստեղծադրծելու մակարդակի վրա: Նա առա-վել եւ, իհարկե, չի կամենում նույնիսկ լսել այն մասին, վոր

անհրաժեշտ և կառվիտալիոդմի անհավասարաչափ զարգացման որենքը վերցնել շարժման, պողովոխությունների և արտահայտության առանձնահատկության մեջ, Համաձայն կառվիտալիոդմի զարգացման Հաջորդական ետապների:

## II

Բուրժուազիայի ազնուած Տրոցկին մի անգամ ընդմիջու վճռել էր կատարել բուրժուազիայի սոցիալական պատովերը և վոշնչեալ առաջ կանգ չառնել բացասակալու համար կառվիտալիոդմի անհավաքարաչափ զարգացման որենքի նոր վորակն ու նշանակությունն իմազերխալիոդմի շրջանում: Ել ինչպիսի՞ ամենի պատշաճ թիկնապահներ կարող եր ճարել իրեն Տրոցկին, քան յեթե Զինովյելկամենենելիքների նման յեփված շրեյկրեխերները:

Ենդ ահա Տրոցկին ու նրան ծառայալրված Զինովյելը, նպատակադրելով սքողելու կառվիտալիոդմի անհավասարաչափ զարգացման որենքի առանձնահատկություններն իմազերխալիոդմի շրջանում, XV կուսկոնֆերանում և Կոմունիտարկան Խնտերնուցիոնալի Գործկոմի VII պլենումում բարձրացրին անասելի աշխատկ, վոր իրը թե կուսակցությունն անոտեսում և այս որենքի առկայությունը և գործողությունը նախախմբերիալիստականդարաշրջանում, կլասիկ կառվիտալիոդմի ժամանակ: Սա, իհարկե, զրպարառություն և ու սուսա: Կուսակցությունն անվիճելին վեճի առարկա չեր կարող դարձնել. իսկ յեթե այդ զորուցականները, —ինչպես նկատեց ընկ. Ստալինը, —մարդութմի հիմնադիրներից կատարած մեջքերումներով կամենում ելին կրկին Ամերիկա դանել, —այդ արդեն ուրիշ բան եւ:

Իմազերխալիոդմը՝ վո՞չ, կառվիտալիոդմ չե, այլ միայն վերջին ետապը կառվիտալիոդմի զարգացման: Այս տեսակետից իմազերխալիոդմի բոլոր որինաչափություններն իրենց արմատներն առնում են արտադրության կառվիտալիստական յեղանակի ամենախոր ընդերքեց, Հիմնավում են կառվիտալիոդմի Հակասական շարժման և զարգացման վրա: Անհավասարաչափ զարգացման որենքը հենց նրանով և Հանդիսանում կառվիտալիոդմի որենք, վորչի ծագել մի ակնթարթում և պատահականորեն, այլ իմա-

Նենու և կապիտալիզմին, անհրաժեշտություն և արտադրության տվյալ յեղանակի ըրջանում:

Տրոցկին ճշում եր, զոր մՄարքսը և Ծնդելոն այդ անհավասարաչափության մասին մեղնից պակաս չդիմենք (Սղագրական հաշվեա). XV կուսկոնֆերանսի, եջ 524): Ի միջի այլոց, նրա իշխական զավակ Պրեորբաժեննին, չնայելով Հակասական վերաբահություններին, ըստ եյության որամազծորեն Հակառակն և պնդում «Յակատ կարուցմաշյում», Հայտարարելով, վոր Մարքսը ցյելում եր կապիտալիզմի զարգացման Հավասարաշափության պրոբլեմը (եջ 54): Սակայն ամյալ կապակցությումք մեզ ավելի կարևոր ե ընդդժել, վոր Տրոցկին իր այս ճիշով մի ավելորդ անդամ ապացուցեց իր մասին յնդած լենինյան դժուհատականը, վորպես «փոքրու Փրազների հերոսի», միշտ սիկոֆանուից առկումներով Հարցի եյությունը ուղաղողի: Ենու հերավի, չե՞ վոր Հարցն արդպես դնելով կնշանակի կլասիկ կապիտալիզմի և իմպերիալիզմի ըրջանում այդ որենքի ունեցած արտահայտության առանձնահատկությունների կոնկրետ անալիզը փոխարինել ընդհանուր Փրազգով:

Մարքսը և Ծնդելոր վոչ միայն դիտեյին կապիտալիզմի անհավասարաշափ շարգացման որենքը, այլև իսկապես, իւ Հակածւին Պրեորբաժեննիու կենծ անդումին, այն տեսական Մոնրլանը, վոր նրանք բարձրացըրին արտադրության կապիտալիստական յեղանակի անալիզով, միստամանակ հանդիսանում ե կապիտալիզմի համար այդ որենքի անհրաժեշտության հիմնավորումը: Այսպես վոր այդ մոմենտի մասին Հարկավոր ե դատել վոչ միայն և վոչ այնքան նրանց ուղղակի ցուցումներով, այլ թափանցելով կապիտալիզմի մարքսիստական տեսության ամբողջ եյության մեջ: Կապիտալիզմի ժամանակ կարո՞ղ ե արդյոք Հավասարաշափ զարգացում լինել: Բավական ե Հարցն այսպես դնել, վորպեսդի նրան դրական արտաժիսան տալու ամբողջ ակարելիությունն ակներև դատնա:

Հայտնի յե, վոր ապրաքնային արտադրությունը հիմնվում է աշխատանքի հասարակական բաժանման վրա և վոր կապիտա-

լիդը, վորովես զարդացած ապրանքային արտադրություն՝ հասցրել և աշխատանքի արդ բաժանումը չտեսնված բարձրության կազմակերպմի զարդացման պրոցեսում վոչ միայն վերջնականապես ձևակերպվեց արդյունաբերության ու հողագործության, ինչպես նաև արդյունահանող և մշակող արդյունաբերության բաժանումը, այլև նրանցից յուրաքանչյուրի մեջ առաջ բնկան նորանոր ինքնուրույն ճյուղեր։ Ալպրանքային տնտեսության զարդացումը, գրում եր լենինը, —տանում և արտախոսվ դեպի արդյունաբերության առանձին և ինքնուրույն ճյուղերի թիվի մեծացումը։ այդ զարդացման տեղենցն այն և, վորպեսզի արդյունաբերության մի առանձին ճյուղ զարմնի վոչ միայն յուրաքանչյուր առանձին արտադրանքի արտադրությունը, այլ նույնիսկ արտադրանքի յուրաքանչյուր առանձին մասը և վոչ միայն արտադրանքի արտադրությունը, այլ նույնիսկ առանձին ոպերացիաներ՝ արտադրանքները գործածության պատրաստելու համար» («Ծօվունիություն», հատ. III, էջ 15)։

Իսկ ի՞նչ և բջիջում աշխատանքի հասարակական բաժանման այսպիսի ծավալումից։ Այն, վոր անընդհատ առաջացող բոլոր նորանոր ձեռնարկություններն ու ճյուղերը փոխազդարձաբար սերտողին կազմում են իրար հետ և այլպիսով վոչ միայն ընդարձակվում են երգին շուկան, այլև ստեղծվում են համաշխարհային շուկա, վորպես արդ փոխազդարձ կազի բնկման և արտահայտության յուրահատուկ Փոկում։

Յեթե նկատի ունենանք, վոր արդ պրոցեսին դուզընթաց ավելի և ավելի յե առաջադիմում աշխատանքի հանրայնացումն այս բաժանվող որյեկտներում, ապա պարզ կլինի, թե կապիտալիզմի ժամանակ արտադրությունը մինչեւ վո՞ր աստիճան կրում է ըստ եյության հասարակական բնույթի։

Մենք այստեղ ունենք այնպիսի դրություն, վոր արդեն չեն կարելի խոսել առանձին անհատի արտադրության ժամին, այլ կարելի յե խոսել հասարակության արտադրության ժամին, վորովհետեւ գործարաններում մշակվող բոլոր ապրանքները հանդիսանում են բազմաթիվ բանվորների աշխատանքի արդյունք և, ինչպես ցույց ե տալիս Ենդելսն Ալմա-Դյուրինդա-ում՝ «վոչ վո՞ք առանձին չե կարող ասել դրանց ժամին, թե այս յես եմ պատ-

բաստել, այս իմ արտադրանքն եւ (եջ 154): ՄԵՆՔ ունենք այնպիսի փաստ, վոր գործարաններում աշխատանքը կաղմակերպված է, ինչպես բնութագրում և ննդելու, գմտածված ծրագրով՝ (նույն տեղը):

Բայց բանն այն է, վոր արտադրության այս հասարակութան բնույթը կապիտալիզմի ժամանակ հանդիսանում է լոկ հակասության, կապիտալիզմի հիմնական հակասության բնեուներից մեկը, վորի մյուս ըմեռը հանդիսանում է մասնավորկապիտալիստական յուրացումը: Հասարակական աշխատանքի արտադրանքը կապիտալիզմի ժամանակ համիշտուկվում և կապիտալիստաների կողմէց, կաղմում և նրանց հարստացման աղբյուրը, և դա այն հիմնա վրա, վոր անմիջական արտադրողները զրկված են արտադրության միջոցներից, վոր այդ միջոցները, վորպես մասնավոր և եփականություն, կենաքոնացած են կապիտալիստների ձեռքում: Այլ կերպ ասած, աշխատանքի հասարակական բնույթի պոտուզները վոչ թե քաղում և հասարակությունը, այլ քաղում են մի խումբ կապիտալիստներ՝ հավելյալ արժեքի ձևով: Սրա հետևանքով ել այս հակասությունն արտահայտվում և պրոլետարիատի և բուրժուալիթայի հակամարտության և դասակարգային պարզաբն մեջ:

Կապիտալիզմի մնացուծ բալոր հակասություններն արդյունք են նրա այս հիմնական հակասության: Որինակ՝ այն հակասությունը, վոր արտադրության ընդարձակման անսահման հնարավորությունները զեմ են առնում սպառման առհմանափակությանը, չնորհիմ մշտապես աճող պառագերիզմի և մասնաների աղքատացման, այսինքն՝ արտադրության և սպառման միջև յեղած հակասությունը՝ հիմնված և կապիտալիզմի հենց այդ հիմնական հակասության վրա և կազմում և նրա արտահայտությունը: Այլ հիմնական հակասությունից ե բղիսում նաև այն, վոր ձեռնարկությունների ներսում արտադրության կաղմակերպմանը հետեւում և արտադրության անարխիան հասարակական մտաշտարպվ: Կատաղի մըշակցությունը բանվորների հավելյալ արժեքի առյուծի բաժինը յուրացնելու համար նույնպես այլ հիմնական հակասության զրանորումն և հասարակության ժակերեւութիւնը վրա:

Կապիտալիզմի անհավասարաշափ զարգացումը ճիշտ կերպով՝

Հասկանալու համար չի կարելի վերանալ արդ Հակառակյուններից, վորոնք իրենց կնիքն են զնում անհավասարաշափ զարդարման վրա, տալիս են նրան հատուկ որենքի, կապիտալիստական սիստեմին հատուկ որենքի բնույթի: Մի՞ն կարելի յեղանազան մեռնարկությունների, ճյուղերի և յերկրների անհավասարաշափ զարդարմանը բաժանել, որինուկ, արտադրության կապիտալիստական յեղանակի անարժիկանությունից և նրա հետ կապված մշակական այլ այլ վերջինները, ինչպես մենք մատնանշեցինք, իրենք հանդիսանում են կապիտալիզմի հիմնական հակառակյան արտահայտություններից: Այդ պատճառով, թե կուզ հենց միայն այս կողմից, կապիտալիզմի անհավասարաշափ զարդարման որենքը չի կարող կապված չընել կապիտալիզմի հիմնական հակառակյան հետ և, վերջին հաշվով, հանգեստ չգտն վորպես մեկը նրա արտահայտություններից:

Ահա թե ինչո՞ւ այնքան վորորմելի և ծիծաղելի յեն հանրամարդկային որենքի պաշապաններն իրենց փորձերի մեջ՝ հրաժարվելու կապիտալիզմի անհավասարաշափ զարդարման որենքի կոնկրետ հիմունքներից: Ենք ահա թե ինչու մարդութիւն հիմքադիրները, Հայութերելով և վերջուժելով կապիտալիզմի հիմքական հակառակյունը, վոչ միայն Շմեզնից վատ չգիտեյինք, այն հիմնավորեցին արդ որենքը:

Մարգար Վապիտապետի 1 հասորում, մատնավորապես «Այստանքի բաժանում և մանուֆակտուրա» դիմում, Հանգամանուրեն կանդ առնելով աշխատանքի հասարակական բաժանման զարդարման պրոցեսի վրա կրապիտալիզմի շրջանում, ընդդեմով աշխատանքի բաժանման սպեցիֆիկ կողմերը, դեռևս սպիրալ կապակցությամբ, ցույց ե տալիս արտադրության զանազան վոլորտների անհամաշափ զարդարման անխուսափելիությունը և դրանով իսկ բաց ե անում անհավասարաշափ զարդարման որենքի առընթերից, արտահայտություններից մեկը: «Մանուֆակտուրայի մեջ՝ գրում ե Մարգար, իստորին վորոշված համամանությունների և հարաբերությունների յերկաթյան որենքը բաշխում և բանվորական մասսաները տարրեր Փունկցիաների մեջն. ընդհակառակը, պատահականության և կամայականության քմահան խաղն իր գործն ե տեսնում ապրանքարտադրողներին ու

սրանց արտադրամիջոցները հասարակական աշխատանքի տարրեր ճյուղերի միջնե բաշխելու դրսում : Թեև արտադրության տարրեր վոլորտները մշտապես ձգտում են հավասարակշռութելու, վորովհետեւ մի կողմից ամեն մի ապրանքարտադրություղ պեսք և մեկ սպառարժեց արտադրի, ուրեմն հասարակական մի հատուկ պահանջմունք բավարարի... սակայն մյուս կողմից եւ ապրանքների արժեքի որենքն ե վորոշում, թե հասարակությունն իր տրամադրության տակ ունեցած ամբողջ աշխատաժամանակի վո՞ր մասը կարող ե ծախսել ամեն մի առանձին ապրանքարտեակի արտադրության վրա : Սակայն արտադրության տարրերը վորոշաների հավասարակշռութելու արդ մշտական միտումն արտահայտվում և լոկ իրրե հակազդեցություն այս հավասարակշռության մշտական խախտման դեմ» («Կապիտալ», հատ. I, էջ 268) : Հենց այսաեղ ել Մարքսն ընդդեռ և, վոր մրցությունը և նրա ներգործությունը փոխադարձ չահերի ընդհարման գծով հանդիսանում են վորպես միակ հեղինակություն անկախ ապրանքարտադրության համար :

Մարքսի այս խռովերի իմաստն այն ե, վոր այն պարմանելում, յիրը աշխատանքի ընդհանրացման պղոցեսը տեղի յե ունենում ընդհանուր առմամբ ապրանքարտին - կապիտալիստական տնտեսության մասնավոր յուրացման և անարխիականության հմգերի լրա, յիրը թելադրող և մրցությունը և վճռող և հանդիսանում արտադրության կապիտալիստական յեղանակի շարժման որենքի, արտինքն՝ արժեքի որենքի տարերքը, ապա ուրեմն չի կարող լինել տարրեր ճյուղերի հավասարաչափ զարդարում և ընդհանրապես զարգացման հավասարաչափություն :

Մենք կցանկանայինք հատուկ ուշադրություն դարձնել մեր Հենց նոր արած մեջբերման այն մասի վրա, վորտեղ Մարքսն աներկմիտ կերպով ընդգծում ե, վոր հավասարակշռությունը կապիտալիզմի ժամանակ յոկ հակազդեցություն և նրա մշտական խախտման դեմ : Դա անհրաժեշտ ե՝ Պրեորբաժենսկու կողմից Մարքսի հասցեյին ուղղված մեր վերեւ նշած «Հանդիմանության» կապակցությամբ : Պրեորբաժենսկին զբարտում ե, յեր ասում ե, թե Մարքսն անդիտանում և անհավասարաչափ զարգացման որենքը . նա այդ ասելով՝ կոնկրետ նկատի ունի

Մարգսի վերաբառության և ճպնաժամերի տեսությունը։ Տրոցկիստական ծուռ հայելու մեջ Մարգսն այսպես և այլանդակիցում։ Վոր յերեսում և վորպես կատարյալ մեխանիստ, վորը կապիտալիստական որինաչափությունների իր քննությունը հիմնում և հավասարակշռության վրա։

Բնորոշ և, վոր Պրեորբաժենսկին յերկշուտությամբ մնջադրելով Մարգսին անհավասարաչափության որենքի անգիտացման մեջ, իր «Յակատ»-ի մյուս մասերում կարծես պատիվ և անում՝ ընդունելով, վոր այսուամենայինվ Մարգսը գիտեր որոշ որենքը։ Այդպիսով, դուրս և զալիս, վոր գիտեր, բայց բացառում նր ինչպո՞ք պատճառով։ Այսուհետեւ, Պրեորբաժենսկուն, իշարին, չեր կարող հայտնի չլինել Մարգսի բազմիցն արտահայտած այն միտքը, վոր «Հավասարակշռությունը կապիտալիստական արտադրության տարերայնորեն ձեւավորվող կարմում հանդիսանում և վորպես պատահականություն» («Կապիտալ», հատ. II, էջ 362)։ Դիալիկտիկական ժառերինալիումի հիմնադիրն ընդհանրապես հեռու յեր այն մարգսը, վարպեսզի յելակետ ընդուներ վոչ թե արտադրության կապիտալիստական յեղանակի հակասական շարժումը, այլ միայն նրա մասնակի գեղագիր և մունեալը՝ հավասարակշռությունը։ Ցերեկ Պրեորբաժենսկուն ձեռնադատու յեր այս ամենը «մոռանալ», վորպեսզի մեղագրանքն ուրիշ վրա բարձելով, թաղցնել կարողանու և արդարացնի իր սեփական և հիսանիցիզիզմը։

Հայտնի յե, վոր ճպնաժամերի մասին Պրեորբաժենսկու աված քաջարությունների» վարիանտներից մեկը հետմարդն և «Հիմնական կապիտալի վերականգնման և առանձնապես մեծացման անհավասարաշափությունը բուրժուատկան հասարակության մեջ՝ հանդիսանում և ընդհանուր տնտեսական ճշնաժամերի գույնավոր, անմիջական և մոտակա պատճառուր» («Յակատ ԿԱՊԻՏ»-, էջ 81)։ Որինակ, զարգացման անհավասարաչափության արագիւսի հասկացողությունը Մարգսը հիրամի «կրացաներ», ինչ դնովել սազում և լինի։

Պրեորբաժենսկուն անհրաժեշտ և մինչ այդ աստիճան սեղմել կապիտալիզմի անհավասարաշափ զարդացման որենքի բովանդակությունը և վերածել այն հիմնական կապիտալի անհա-

վաստարաշտի վերականգնման ու մեծացման, վորովեսդի առանց գժվարությունների կարողանա ի չիք հայտարարել կապիտալիզմի հիմնական հակասությունը՝ արտադրության հաստրուկական բնույթի ու յուրացման մասնավոր բնույթի միջև և ճշնաժամների գլխավոր պատճեռ ցուցադրել հիմնական կապիտալի հենց այդ անհավաստրաչափ վերականգնումն ու մեծացումը:

Բայց աշխաթող անել ճզնաժամների իսկական դիմավոր պատճեռը՝ կապիտալիզմի հիմնական հակասությունը, անդիտանալ, վոր հենց նրանով և պարանուավորված հիմնական կապիտալի արդ վերականգնման և մեծացման անհավաստրաչափություն և առաջարրել այս վերջինը վորպես գոլիսավոր պատճեռ, սա նշանակում է հորինել ճզնաժամների համար արնորիսի գլխավոր պատճեռ, վորը հասունի չե, իմանենա չե կապիտալիզմին, իսկ արքանեղից ել սկսել բացանել ճզնաժամների անխուսափելիությունը և անհրաժեշտությունը կապիտալիզմի համար:

Գրեռը աժեհնակին հենց արտեհզ ել համառում և, չընդունելով, վոր իմպերիալիզմի ժամանակ շարժման ցիկլային բնույթը, թեկուղ մողեփեկացիայի յենթարկված առևտով (այն իմաստով, վոր ճզնաժամի ժամանակամիջոցն ավելի յերկարանե և տանջալից և, իսկ վերելքի ժամանակամիջոցի անողությունը խիստ կարճատե), շարունակում ե պահել իր լիակատար ուժը: Նա, ընդհակառակը, գիրազաստամ և հարստացնել հարմոնիկ կապիտալիզմի տակառությանը ժանդուած դինանոցն իր ուրինակով, ըստ վորի մոռոպալիստները գիտակցարար կազմելով հիմնական կապիտալի ռեզերվները, այդ ռեզերվներն ապահովելով բազականացափ առանձակականությունը, գրանով իսկ կարող են ստեղծել անխափառելի հավասարակշռություն, կանխելով ամեն տեսակի ցնցումներ, վորոնց կապիտած են հիմնական կապիտալի վերականգնման և մեծացման անհավաստրաչափության հետ:

Հետեւալ անհավաստրաչափության մունիսիկ՝ «հարմոնիկ» կապիտալիզմի «հավասարաչափության» և «հավասարակշռության» գարաշինությանը առկա շարժադրաներից շարքերը մտնելու համար, — ահա թե վորտեղ պետք ե փնտուեր Պրեորչաժենակին մեխանիցիզը:

Նպատակ չընելով շուրջ տալու զիրարտադրության և ճշգնաժամկերի մարդուն տեսության պողպատակուու զիմացկունությունը բազմաթիվ այնպիսի հարձակումների դեմ, ինչպիսին և Գրեորբաժենուկու հավակնությունը՝ զարդացնելոք, այսինքն՝ ռեսլիոնիայի յենթարկել այլ տեսության հիմունքները, մենք ավելորդ չենք համարում ընդդեմ, վոր այլ տեսությունը լին' չի միայն չի տալիս վորեն առիթ մեղադրելու Մարքոսին կապիտալիզմի զարգացման անհավասարաշափության որենքն անդիտանալու մեջ, այլ, ընդհակառակը, նա միաժամանակ հանդիսանում և վարպետ այլ որենքի հառուկ իւլյուսորացիա և հիմնավորում:

Մարքը զիրարտադրության և ճշգնաժամկերի իր տեսությամբ եյասեա պարզեց և լուծեց արտադրության կազիոտալիտական յեղանակի հավասարաշափի, հարթ, ներդաշնակ զարդացման անկարելիության պրոբլեմը: Նա իր գիտական արդուրակցիայով՝ զիրարտադրության սինէմաների մեջ վիրլուծելով՝ համամանականության (пропорциональность) և հավասարակշռության համար բոլոր պահանջմով պարմաները, զբանով իսկ ընդդեմ հենց նրանց հարաբերականությունը և պատճենականությունը, օվորովի ետև կատալիմոտական հասարակության մեջ, վարտեղ հասարակական հասկացողությունը միշտ իրազեկ և գարձնում իր մասին միայն post festum՝ կարող են ծագել և պետք և մշտապես ծագեն խոշոր խախտումները («Կապուտաց», համ. Ա, էջ 287): Բայց մի՞թե այսպիսի նըրությունները կարող են ըմբռնել մեխանիսմը, վորը տեսնում և միայն սխեմաների արտաքին կողմը և անդիտանում և նրանց խորիմաստրովանդակությունն ու եյությունը:

Հայտնի յե, վոր Մարքը և՛ տովյալ, և՛ այլ կազակցությամբ, քննելով առաջին և յերկրորդ ստորարաժանման զարդացման անհավասարաշափության առկայությունը, ակներև կերպով շուրջ ավեց, վոր այս անհավասարաշափության հասուկ սոցիալ-դասակարգային դեմքը բնորոշվում և կազիոտալիզմի հիմնական հակառակյամբ, վոր զոյտությունն ունի արտադրության հասարակական բնույթի և կազիտալիտատիկայի միջև: Ժնուտակումը կուտակման համար, արտա-

դրսւթյունն արտազրության համար, —զբում եր Մարքսը, —այս ֆորմուլով կլասիկ քաղաքատնախությունն արտահայտեց բուրժուական ժամանակաշրջանի պատմական կոչումը» («Կապիտալ», հատ. I, էջ 469): Այս պատմական կոչումը կոնկրետ կերպով արտահայտվում է I ստորաբաժանման ավելին արագ աճի ժեղ՝ II ստորաբաժանման համեմատությամբ:

Բայց կապիտալիզմի այս պրոդրեսիվ կողմն ազդրից ևեթիրում և սահմանափակ բնույթ և վերջին հաշվով դեմ և տանում այն սահմանագծին, վոր սրան համապատասխան կերպով չի ընդարձակվում սպառման բաղան, վոր արտադրողական ուժերի այսքան սրբնթաց զարգացումը չի ովառազործվում արտադրողների մասսայի կողմից: Խնչպես դրում եր Լենինը, —ճիշտ չեր լինի յենթագրել, վոր արտադրության միջնորդը պատրաստելը կարող և զարգանալ միանգումայն անկախ սպառման առարկաներ պատրաստելուց և վոչ մի կազ չունենալ նրա հետ» («Տօնություն», հատ. II, էջ 400):

Արտադրության միջնորդը կապիտալի ձևությում են վոչ թե արտադրողների կյանքն ու աշխատանքի պարմանները՝ բայց նավելու, այլ հանդիսանում են արտադրողների, վորպես վարժու ստրուկների, շահապործման և ստորացման հիմք, հավելյալ արժեքի յուրացման և կապիտալի մեծացման հիմք: Այդ պատճառով արտադրողական ուժերի զարգացումը կապիտալիզմի ժամանակ՝ արտահայտվելով առաջին ստորաբաժանման ամելիի արագ զարգացման ձևով՝ քան յերկրորդինը և հանդիսանալով կապիտալի մազնատների հարստացման միջոց՝ դանդում և մշտական հակառակության մեջ արդպիսի սահմանափակ նոպատակի հետ:

Այս վերծեցեք Հրաժարվել այսպիսի ա' և Տրոցկի «զծերից», ինչպիսին I և II ստորաբաժանումների կապիտալիստական զարգացման անհավասարաշտիւթյունն է! Այն ժամանակ ստիպված պետք է լինեք ընդունելու մի այսպիսի անժտություն, վոր արտադրության միջնորդների արտադրության և սպառման միջնորդների արտադրության զարգացման բնադաշտում մենք կունենանք հար և նման անհավասարաշտիւթյուն և' սոցիալիզմի, և' լիակատար կոմունիզմի ժամանակ: Զե՞ վոր ընդհա-

Նուր առմամբ այսոնեղ ևս անհրաժեշտորեն արտազըռության միջոցների արտադրության զարգացման տեմովը չի կարող շղերազանցել սպառման միջոցների արտադրության զարգացման տեմովին:

Սակայն բանն այն է, վոր արտազըռության միջոցների զարգացման այլավեսի բարձր տեմովը վոչ միայն կապված չեւ սոցիալական կոնֆլիկտների ու ընցումների հետ, այլև գիտակացորեն նախաղծված կարգով ամրողապես ծառայում և արտադրողների աշխատաժամերի կրնամանը և առհասարակ աշխատանքի պայմանների բարելավմանը, արտադրողականության հարաճում բարձրացման հիման վրա ավելի ու ավելի մեծացնելով սպառման հասարակական ռեսուրսները։ Տարբերությունը, ինչպես տեսնում ենք, արմատական ու սկզբունքային բնույթի կրում։

Արդպիսով, մենք վո՞ր կողմէց եւ մոտենալու լինենք հարցին, անկարելի կլինի բացատել, վոր զարգացման անհավասարաշափությունը կանոնավորմի ժամանակ, պործելով նրա հակառակությունների Փոնի և Հիմքի վրա, Հանդիսանում և վորպես արտազըռության կազիտալիստական յեղանակի հատուկ որենք։

Սակայն կազիտալի միջազգային յերմաւոյթ և և վոչ թե կղզիացած։ Նա սպառմության ասպարեզ յելնելու հենց մղղընավորությունից ճեղքվածք առաջ բերեց Փեռողալական անտեսության ինքնամփոփ սրտում և ավելի ու ավելի խորացնելով՝ արդ ճեղքվածքը, վերջիներջո բոլորովին փշցրեց առանձնացած Փիոդ-Ռեքը և ստեղծեց կազիտալիստական ազգային-տնտեսական մարմիններ։ Այդ պրոցեսի մեջ նրան չկարողացավ դիմադրել և վոչ մի «չինական» պարիսազ, և կազիտալն իր գործը կատարեց առենուրեք, վորտեղ նա կարողացավ թափանցել։ Նա, ինչպես մենք ցուց տվինք վերեւ, ծավալից աշխատանքի հասարակական բաժանումը ծայրահեղ չափերով և զա վոչ միայն նրա կողմէց կազմավորած ազգությունների ներսում, այլև միջազգային մասշտաբով։ Հետևապես, կազիտալը վոչ միայն բաժանեց ազգություններն իրարից, այլև կապեց նրանց համաշխարհային չուկայի հանդույցներով և կապեց այնպես, վոր, որինակ՝ Անգլիան չի կարող ապրել մեկ շարաթ առանց դրսից կենսամթերքներ ներմուծելու։

Յեվ այդպիս, յեթե իրեն՝ արտադրության կազիտալիտու-  
կան յեղանակին իմանենատ և զարդացման անհավասարաշափու-  
թյունը, ապա տարորինակ և անհասկանալի կլինի կարծել, թե  
ազգային-անտեսեական մարմինները, վորոնց մեջ և ամփոփված  
արտադրության սովորական յեղանակը, կարող է յին զարդանալ հա-  
վասարաշափի։ Զենքարձությունների, վոլուրանների, ճյուղերի,  
սուրարաժամումների անհավասարաշափ զարդացման ժամանակ,  
նրանց ընդդրկող առանձին յերկրների հավասարաշափի զարդա-  
ցում չեւ կարող լինել միջազգային շամփերով տարերայնորեն  
առող աշխատանքի հասարակական բաժանման պայմաններում։  
Ահա թե ինչու անհավասարաշափության որենքի մասին մենք  
պետք եւ խոսենք վուշ միամյ կազիտալիտատական արտադրական  
միավորների և խմբերի նկատմամբ, այլև առանձին կազիտա-  
լիտատական յերկրների։

Բայց սովորակցությամբ անհրաժեշտ և կանոն առնել  
մի շարք խնդիրների վրա, վորոնք ունեն ամենատերու-  
թյունը կազիտալիորմի անհավասարաշափի զարդացման որենքի  
հետ։

### III

Մենք վերևում աշխատեցինք ցույց տալ կազիտալիորմի ան-  
հավասարաշափի զարդացման որենքի ամենախոր հիմունքները,  
այդ որենքի պայմանավորված լինելը արտադրության կազիտա-  
լիտատական յեղանակով, նրա համեստություններում։ Բայց յերր  
խոսում ենք առանձին կազիտալիտատական յերկրների զարդաց-  
ման անհավասարաշափության մասին, արտեղ մենք անպայման  
պետք եւ նկատի ունենանք սովորական կոնկրետ պայմանները, վորոնց  
Փոնի վրա տեղի ունի կազիտալիորմի անհավասարաշափի զարդաց-  
ման որենքի արդ հիմունքների գործողությունը։

Վերցնենք հետեւյալ հարցը։

Մենք ժխտում ենք և միանդամայն իրավացիորեն արհա-  
մարհանքի յենք արժանացնում կառւցկիսական նատուրալիտա-  
տական փորձերը՝ բացատրելու գյուղամատեսության զարդացման  
տեմպի հետ մնալն արդյունաբերության տեմպից՝ կազիտա-  
լիորմի ժամանակ։ Սա արդյո՞ք նշանակում է, վոր մարդութիւն

ընդհանրապես ժխտում է բնական պայմանների գերը կապիտալիստական գարզացման ընթացքում։ Յերբեք Արդպիսի միակողմանիության մեջ ամենից քիչ կարելի յէ հանդիմաննել մարդությը, արդյունարերության առանձին ճյուղների և առավել ևս զանազան յերկրների գարզացման անհավասարաշափությունը բացատրելիս։

«Կապիտալ»ի III հատորում Մարքսը, ընդդեկով արդյունարերության այլ և այլ ճյուղերում աշխատանքի արտադրողական ուժի անհավասարաշափ զարդացման փաստը, գրում է. «Եթե արտադրողական ուժի զարդացումն արդյունարերության այլ և այլ ճյուղերում կատարվում է վո՞չ միայն չափազանց տարբեր համամասնություններով, այլ և հաճախ հակադիր ուղղությամբ, ապա դա միայն անարխիայից ու մրցակցությունից և արտադրության բուրդուական յեղանակի առանձնահատկությունից չե, վոր բղիում է։ Աշխատանքի արտադրողականությունը կազմած և քննական պայմանների հետ, վորոնք հաճախ դառնում են պակաս ճենառուարտադրողականության բարձրացմանը զուգընթաց, ինչ չափով վոր վերջինս կարիքան մեջ և հասարական պայմաններից» («ՀԱՌԻՏԱԼ» III հատ. էջ 179)։

Դժվար չե հասկանալ, վոր Մարքսը բնական պայմաններին ինքնուրույն գեր չի վերագրում, այլ այդ գերը նա արժեքավորում և արտադրողականության բարձրացման և վերջինիս հասարակական պայմանների ասպեկտով։ Միայն այս սահմաններում, նրա տեսակետով, բնական պայմանները կարող են ազդել արդյունարերության տարբեր ճյուղերի աշխատանքի արտադրողական ուժի զարդացման անհավասարաշափության վրա։

Մարքսը, ընդհանրապես, այլ կապակցություններով բարձից ընդդեկ և բնական միջավայրի նշանակությունը, որինակ՝ այլ միջավայրի գանաղանակերպ լինելը քպահանջների, ընդունակությունների, աշխատանքի յեղանակների զարդացմանն ուժանդակելու իմաստով, իսրա վորպես «աշխատանքի բաժանման բնական հիմք»։

Միաժամանակ Մարքսը յերբեք չեր մոռանում, վոր բնական պայմանների նշանակությունը բացարձակ չե, այլ միանդամայն հարաբերական, վոր ինչքան հասարակության պրոդրեն առաջ

և ընթանում, այնքան ավելի յէ բնական միջավայրի դերը յենթարկում արտադրողական ուժերի դարձացման սովոր առաջաւ հանին. այլ կերպ ասած՝ Մարգան ամենափոքր շափով խոկ չեր նահանջում մոնիզմից, վարսելով բնական միջավայրի դերը և նշանակությունը, նայած արտադրողական ուժերի վիճակին և ընդհանրապես արտադրության ավագալ յեղանակին:

Նույնը պետք և ասել աշխարհագրական պայմանների վերաբերյալ: Հին, իմաստում ափորիզմն առում և, վոր ծովը բաժանում և միացնում և, նայելով թե ծովային տարերքը վո՞ր աստիճան սահմանարգմած և արտադրողական ուժերի դարձացման միջոցով: Այսպիսով արտադրության սովոր յեղանակի, նրա արտադրողական ուժերի դարձացման լույսի տակ միևնույն բնական և աշխարհագրական պայմաններն ստանում են այս կամ այն արժեքավորումը:

Վաղ կուպիտալիզմի շրջանում Հոլլանդիան հանդես եր դամիս վորսես առաջնակարգ յերկիր: Նա հոչակիված եր արդյունաբերությամբ, գերազանցում եր բոլորին իր ծովալիքն ուժերով, համարվում եր համաշխարհային գաղութային պետություն, մի խոսքով նա հանդիսանում եր, ինչպես Մարգան և առում՝ «XVII դարի որինակելի կապիտալիստական յերկիրը»: («Կապիտալ» հատ. I, էջ 607): Սակայն Հոլլանդիայի բնական և աշխարհագրական պայմանները բացարձակ կերպով շատ քիչ եյին փոխվել, յերբ նա—դարձացման անհամաշատության «կամքով»—ստիպված յեղանի իր առաջնությունը դիմել Անգլիային:

Եեր Անգլիան առանձնապես XVIII դարի սկզբից սրբնթաց կերպով ակնեց վեր բարձրանալ մինչև աշխարհի արհեստանոցից բարձունքները, այստեղ, իհարկե, դեր խաղացին նրա բնական և աշխարհագրական առավելությունները: Իր չերապարակած ձեռնությունը Մարգար, քննելով կապիտալիզմի դարձացման անհամաշարաչափությունն Անգլիայում և Ֆրանսիայում, միջ և բերում մի հեղինակի խոսքները, թե՛ արդյունարերության վույրների և մկանների՝ ածխի ու յերկաթի բացակայությունը Ֆրանսիայում կաշկանդում և նրա, վորսես արդյունաբերական յերկրի, դարձացումը» (Արքiv M. և Թ., II (VII) էջ 255): Անգամակած և, վոր Անգլիայի դարձացման համար նվազ

Նշանակություն ունեցող հանգամանք չեր այս Փլուկորների և մկանների բավականաչափ քանակությամբ տոկա լինելը, այն, վոր նա ուներ քարածիսի հոկայական հանքավայրեր և նրանց մոտիկ հարուստ յերկաթահանջմը:

Բայց չեղ վոր սիրում, նախքան արտադրողական ուժերի զարգացման վորոշ աստիճանը, ավելի կոնկրետ ասած՝ մինչև չողու զարի և նրա հետ միասին արտադրության բուրժուական յեղանակի հաղթանակը, Անդիխան նույնիսկ չեր կարող յերազել իր պատենցիալ հնարավորություններն ոգտազործելու մասին, թէ այդ և թե ծովագնացության դժով, վորովեզի հանի Հռւանդիային և բարձրանա մինչև «աշխարհի արհեստանոցի» և «ծովերի թագուհու» դրությանը:

Այս թե ինչու Մարքսը, համաձայնվելով մատնանշված հեղինակի հետ բնական միջավայրի այս կամ այն առանձնահատկության ունեցած գերի վերաբերյալ, հեռու յե նույնիսկ այն ժաքից, թե կարելի յե այդ մոմենտին վճռական նշանակությունները, բացատրելու համար կազիտալիզմի զարգացման անհավասարաչափությունն Անդիխայում և Ֆրանսիայում։ Նա թվական տվյալներով վեր հանելով արտադրողական միավորների մեծության, շաղեղազդյանների գործածության և այլ գծերով այդ յերկրների ունեցած տարրեր մակարդակը՝ վորովես հետևանք կազիտալիզմի անհավասարաչափ զարգացման, վերջինիս հիմնական պատճառը պինտում և հենց արտադրության կազիտալիզմական յեղանակի և նրա հակասությունների մեջ։

Ի՞նչ չափով են եքսպրուզիացիայի յենթարկված անմիջական արտադրողները և ի՞նչ չափով են կազիտալիզմաների կողմից մօնուպլիզացիայի յենթարկված արտադրության միջոցները և, հատկապես, ի՞նչ չափով և բազա ստեղծված կուտակման և կենտրոնացման համար, արտադրության հասարակական բնույթի և մասնավոր յուրացման միջև գոյություն ունեցող կազիտալիզմական հակասության շարժման համար — ահա թե ինչվերա յե սրում իր ուշադրությունը Մարքսը, յերբ բացարհամ և կազիտալիզմի անհավասարաչափ զարգացման պատճառներն Անդիխայում և Ֆրանսիայում։

Այլ կերպ՝ Անդիխան ի՞նչպես կարող եր միակ իր բնական-

աշխարհաղբական տռավելություններով Թրանսիայից շատ տռավելուն անցեմ, յեթե Հող չիներ նախապատրաստված արտադրական ուժերի ավելի արագ զարգացման համար անմիջական արտադրողների եքսպրոպրիացիայով, վոր ռուրված և մարդկային տարեկարության մեջ սրի և հրի բացավառ լեզվով (Մարգա), մի պրոցես, վոր այդ ժամանակաշրջանում Թրանսիայում տեղի յեր ունենում համեմատաքար վոչ այնքան ինտենսիվ կերպով, վորքան Անդիայում:

Հետևապես, մարգսիզմը համապատասխան տուրք տալով բնական-աշխարհաղբական պարմանների նշանակությանը, այնուամենայնիվ այս չի գործնում կապիտալիզմի անհավասարացափ զարգացման ինֆուզույն գործոն, այլ նրա գործողությունը պարմանավորում և հենց կապիտալիզմի արտադրողական ուժերի զարգացման անհավասարաշափությամբ:

Մենք մինչև այժմ քննում ենինք կապիտալիզմի անհավասարացափ զարգացման բացառություն տնտեսական կողմը: Այդ հասկանայի յե, վորովհետեւ գա ամենաորոշական ուժը և ամենաակարեվորը տվյալ պըրորդնմը ճիշտ լուծելու համար: Սակայն մեծագույն դռեհկացումը կը իներ պատեցնել ամեն ինչ տնտեսական բազիսի շուրջը և նվազեցնել ու առավել ևս արհամարհել այնպիսի վերնաշենքի դերը, ինչպիսին քաղաքականությունն եւ:

Իդուք չե, վոր մենք խոսում ենք կապիտալիզմի անհավասարաշափի տնտեսական և նապահովիչի զարգացման որենքի մասին: Թե առեւ և եկոնոմիկան հիմունքների հիմունքն ե, թե առեւ և քաղաքականությունը ինքը հանդիս և գալիս վորպես խռացված եկոնոմիկա, այնուամենայնիվ քաղաքականությունը յերբեք եկոնոմիկայի պառախիլ կցորդը չե, այլ, համաձայն մարգսիստական հանրահայտ հշմարտության, այնպիսի մի ակտիվ գործոն ե, վորը հակադարձ զորեղ ներդործություն և ունենում եկոնոմիկայի զարգացման վրա, մերժինիս դանդաղեցման կամ արտգացման իմաստով:

Յեթև 1566—1588 թ.թ. նիդեռլանդական հաղթական հեղափոխությունը չիներ խաղանական բռնակալի գեմ և այդ հիմքի վրա շարժեանար համապատասխան քաղաքական կարգ, Հունդիայի աստղը 17-րդ դարում չեր փառի այնպես: Այ հարց

և, վոր ինքը հեղափոխությունը Փետրալական հարաբերությունների վորոշակի քայլայումն ու խարիզումն եր նշանակում նորածին կապիտալի կողմից :

Նույնը կարելի յե ասել Անդլիայի մասին, վորտեղ, մյուս յերկրների համեմատությամբ, ավելի արտագահան բուրժուական հեղափոխությունը, հողատերերի և կապիտալիստների, տորեների և վիզերի փոխադարձ համաձայնությունը բուրժուական հողի վրա ամենավճռական կետերում և ըստ այն ստեղծված քաղաքական կարգերը քիչ չոժանդակեցին Անդլիայի ավելի արագ կապիտալիստական դարձացմանը : Սակայն այդպիսի հարավորություններն ինքնին խոսում եյին այն մասին, վոր յերկրի եկոնոմիկայում արգեն բավականաչափ արմատներ և բռնել և ուժեղացնել կապիտալը և պահանջվում եր լոկ համապատասխան քաղաքական դարձացում, վորպեսզի ապահովիլի նրա հետագա ավելի արագ ծավալումը :

Ֆրանսիայի որինակը, վորտեղ բուրժուական քաղաքական դարձացումը ֆրանսիական Մեծ հեղափոխության ըրջանում հասվ, կարելի յե ասել, իր ամենաըրարժը տատինանին, ակներև կերպով ցույց ե տալիս քաղաքական դարձացման դերի ամբողջ հարաբերականությունը, վորովհետև ֆրանսիան դրանով վոչ միայն չկարողացավ տեղաշարժել կապիտալիստական դարձացման կշռոքն իր ովոտին, այլև չկարողացավ դերծ մնալ ուստամբացին արշավներից :

Այնուհետև, յեթե վերցնենք Գերմանիան, կտեսնենք, վոր նայերկար ժամանակ անշարժ մնաց մերյալ կետում, չնորհիվ վոչ միայն անտեսական, այլև քաղաքական դարձացման անհավասարաչափությունը : Մարդուն այդ ետարի մասին ասում եր, վոր նատառապում և վոչ այնքան կապիտալիզմի դարձացումից, վորքանթերզարդացումից : Մեղալի հակառակ կողմը քաղաքական դարձացման խիստ հետամնացությունն եր : Սակայն փաստը մնում և փաստ, վոր արդ հետամնաց քաղաքական պայմաններն իրենց հերթին արհետական կերպով կաշկանդում եյին կապիտալիզմի դարձացումը : Այդ տեսակետից պատահական չե, վոր քաղաքականության մեջ «Յերկաթյա կանցլերի» ժամանակից տեղի ունեցած շրջադարձն անհետեւանք չանցավ և Գերմանիան սկսեց խոչը բեկում կատարել կապիտալիստական դարձացման ասպարիդում :

Վերջապես ամենքին հայտնի յեւ, վոր մեզ մոտ թուսառաւ-  
նում այսպիսի քաղաքական իրամ, ինչպիսին Հանդիսանում եր-  
շարիզմը, վոչ միայն հասարակ անդրադարձումն եր յերկրի տըն-  
տեսական կյանքի հետամնացության, այլև այդ հետամնացու-  
թյունը հավերժացնող կապանք եր:

Մեր այս թուուցիկ նկատողությունները ցույց են տալիս, վոր  
անտեսական անհավասարաչափության բաղայի վրա յերեան և  
դալիս զարգացման քաղաքական անհավասարաչափությունը, վոր  
նրանք հյուսվում են մեծը մյուսի հետ, դանովում են փոխադարձ  
կազի և փոխներզործության մեջ և արդ ամենի հետեւանքով՝  
մենք ունենք կապիտալիզմի անտեսական և քաղաքական անհա-  
վասարաչափ զարգացման որենք:

Մենք այստեղ մի անզամ ել ընդդժում ենք, վոր հին կապի-  
տալիզմի որոշ զարգացման անհավասարաչափության որենքի  
մասին մենք ունենք Մարքսի վոչ միայն ընդհանուր, այլ և բար-  
ձաթիվ ուղղակի ցուցումները. որինակ՝ նա «Համիլյալ արժեքի  
թերիաները» աշխատության մեջ գրում և. քայլ վորովհետեւ  
կապիտալիստական արտադրությունը կարող և զարգանալ մի-  
միայն վորոշ վոլորտներում, վորոշ պայմաններում, ուստի ընդ-  
հանրապես անհնարին կլինի կապիտալիստական արտադրությու-  
նը, յեթև նա միաժամանակ և հավասարաչափ լիներ բոլոր վո-  
լորտներում» («Теории приб. стоим., Համ. II, էջ 197):

Լինինը նույնպես այդ անհավասարաչափության մասին խո-  
սել և շատ անզամ: Հետոն Փորմյան շրջանում, — զրում եր նա, —  
«Արորի և զմբիչի (պը), ըրաղացի և մանվածքային մեռքի զար-  
դյանի թուսատանն ակնեց արագ կերպով դառնալ գութանի,  
կալսի մեքենայի, շոգեաղացի և մանվածքային շոգեդադյան-  
ների թուսատան... Այս փոփոխության պրոցեսը, կապիտալիո-  
ւի բնույթի համաձայն, չի կարող ընթանալ այլ կերպ, քան  
մի շարք անհավասարաչափությունների և անհամամանություն-  
ների մեջ» («Сочинения» Համ. III, էջ 466):

#### 17

Սակայն չե՞ վոր իմպերիալիզմը վոչ կապիտալիզմ չե՞ այլ,  
ինչպես բազմիցո ընդդժու և լինինը, նա «հին կապիտալիզմի վրա  
բարձրացած վերհաշենք» և («Сочинения», Համ. XXIV, էջ

132) : Այդ պատճառով, թեկուզ հենց միայն այս տեսակնետից, կապիտալիզմի անհավասարացանի դարձացման որենքն ընդհան- րառման չի կարող հասունէ շրինեւ և նրան : Սակայն արդպիսի ընդհանուր դրույթը կարող է բավարարել միայն հասարակա- կան-անտևառական Փորմացիաների և նրանց որինացափություն- ների մետաֆիլիկ մեկնարանողներին :

Կապիտալիզմը, վորագեն հասարակական-անտևառական Փոր- մացիս՝ կանոնած չեմ մեկ կետի վրա, այլ ունի իր ծագման, զարգացման և անհման պատմությունը : Յեզ ահա, քեթե խոր- բալիզմը վոչ-կապիտալիզմ չեմ, յեթե նա դուրս չեմ կապիտա- լիզմից, ապա նա ողքություն միասուն չի նույնանում ազատ մըր- ցակցության ժամանակաշրջանի այսպես կոչված կլասիկ կապի- տալիզմի հետ : «Մագերիսալիզմը, —գրում եր Լենինը, —կապիտա- լիզմի հասունէ պատմական ստագիտան : Այդ առանձնահատկու- թյունը յերեքն եւ իմպերիալիզմն եւ (1) մոնոպոլիստական կապի- տալիզմ . (2) —մակարուծական կամ փողով կապիտալիզմ . (3) — մենուզ կապիտալիզմ («Ծովունակություն», հատ. XIX, հջ 301) : Այս կողմէն հիմք են տալիս ամարելու իմպերիալիզմը նոր վորակ, սակայն վոչ կապիտալիզմի նկատմամբ, այլ կապիտալիզմի ներ- սում, վորն ընդդրկում է հին կապիտալիզմը և իմպերիալիզմը, վորուս տարբերություններ միասնության մեջ, վորովս կապի- տալիզմի ընդհանուր վորակի հասունէ վորույի նոր :

Իսկ յեթե կապիտալիզմը կանգնած չեմ մինույն կետի վրա, ապա անտրամարանական և ուղղակի անհեթեթ կլիներ յինթա- դրել, վոր նրա որենքները չեն զարգանում, չեն ձևափոխվում, չեն ստանում արտահայտության նոր վորակ : Չե՞ վոր կապի- տալիզմի շարժումը կոնկրետ կերպով արտահայտվում և մարմ- նավորվում եր որենքների շարժման և զարգացման մեջ : Այս իմաստով, ինչպես չի եարելի միխանիստորին հակառակ կամ նույնացնել հին կապիտալիզմը և իմպերիալիզմը, ճիշտ նույն կերպ եւ չի կարելի հակառակ կամ նույնացնել կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման որենքը հին կլասիկ կապիտալի- զմի և իմպերիալիզմի շրջանում :

Այդ որենքն իմպերիալիզմի լրջանում նույնն եւ, բայց և նույնը չեմ, վորովհետեւ այսուղ մենք փոփոխություն ենք տես-

նում նրա մեջ։ Այստեղ կապիտալիզմի անհավասարաշափ դարձացումն արտահայտվում է ընդհատավողականության հետ դուռդրգվող և դրանով իր ներզործության թափը բազմապահող թուշքավորության ջղաժիգ կերպարանքով, վորին ավելի հանգամանուրն կանդրադառանք իր տեղում։

Ահա այդ նորը նկատի ուներ ընկեր Ըստալինը, յերբ ասում եր, վոր Լենինը բացահայտեց և ձեւակերպեց կապիտալիզմի անհավասարաշափ դարձացման որենքը, իմակերիալիզմին Հատուկ պարմաններում։ Խոկապես, սովորական թեզը լիովին համազատատիսանում և նրա կլասիկ բնորոշմանը, թե՝ լենինիզմը պրոլետարական հեղափոխության և խմակերիալիզմի դարաշրջանի մարզսիրման եւ։

Լենինիզմը բաց և անում կապիտալիզմի որինաշափությունների արտահայտությամբ, սուանձնաւուատկությունները՝ նրա զարդացման ամենաբարարձր ստադիայում—իմակերիալիզմի շրջանում։ Մարքսը և Ենդելյոն իմակերիալիզմի շրջանում չառպելով, այդ ուղղությամբ բացի ընդհանուր կոնտուրներ և շարժման տենդենցիաներ գծելուց, բացի հանձնարեղ նախատեսություններից, ուղղակի հարավորություն չունեցին սովորին կառարելու։ Նրանց աշտկերտները՝ Լենինը և Ստալինը, շարունակելով դարձացնել մարքսիզմը նոր սկսումական ժամանակաշրջանում, վեր հանեցին նույնական վորակային այն նոր բնորոշումը, վոր ստացավ կապիտալիզմի անհավասարաշափ դարձացման որենքը իմակերիալիզմի շրջանում։

Եւրո հականեղափոխական Տրոցկին սկսեց բարձրացնել իրեն հատուկ աղմուկը, թե՝ Մարքսն ու Ենդելյոր նույնակեն դիտելին այդ որենքը, դա մի սովորական բժամինդրություն չեր Տրոցկու կողմից։ Դա մի նոր առացույց եր նրա մտածողության բուրժուական—մետաֆիզիկական կառուցվածքի, քանի վոր նաև հենց դրանով այդ որենքի վերաբերյալ իր դոգմատիկ հասկացողությունը հակադրում եր դիալեկտիկական—մատերիալիստական հասկացողությանը։ Դա, վերջապես, մի հերթական փորձ եր նրա կողմից իր փառած մեթոդով ուղիական հիմունքների վրա, նման մի կարևոր կետում, վարկարեկել լենինիզմը, ժիտել նրա տեղը և նշանակությունը պրոլետարիատի իդեոլոգիայի և աշ-

իսարհայացքի զարգացման դործում, Հանուն Հակաճեղափոխական արոցկիղմի:

Յեզ ահա, Տրոցկին, —բուրժուական այդ Դոնելիիքոստը, ունենալով այսպիսի կետնաբառակ, այն բանից հետո, յերբ նա ամեն կերպ աշխատեց անհավասարաշափ զարգացման որենքը դարձնել վոչ պատմական մի որենք պիր Սանչո-Պանսայի՝ Զինովյավի հետ միասին 15-րդ կուակոնֆերանսում սկսեց քշտած թևերով կատաղորեն առարկել լենինյան-առաջինյան արդ թեղի դեմ, վոր վերաբերում և անհավասարաշափ զարգացման ողբեղ, ջղամիդ բնույթին մոնոպոլիսատական կոսպիտալիզմի ժամանակ, այդ որենքի ընդհատիդողական-թրիչքամե արտահայտությանը:

«Ընկ. Առալինը, —ասում եր Տրոցկին, —ընկել և մի՛ մեծաղույն տեսական և պատմական սխալի մեջ (sic! Հազանորեն այն պատճառով, վոր տեսությունը նա չեր ամփրազետում պատմությունից և չեր արտահայտում այնպիսի արտառուց, վոչ-պատմական մոտեցում զեօքի հասարակական որինաշափությունները, ինչպես մեր կարծեցյալ տեսարանը —Հ. Հ.)... Կապիտալիզմը, անկատկած, ծայրահղորեն անհավասարաշափ և զարգանում նաև այժմ բոլոր յերկրներում, սակայն XIX դարում այս անհավասարաշափությունն առիշլի մեծ եր, քան XX դարում» (Սղագը. Հաշվետ., եջ 524): Նույնին եր կրկնում նաև Զինովյավը. «Ճիշտ չե, —ասում եր նա, —վոր կապիտալիստական զարգացման անհավասարաշափությունը մինչև իմպերիալիստական դարաշրջանը ավելի փոքր եր» (Սղագը. Հաշվ., եջ 573):

Եյապես վոչ մի բան չե փոխում այն հանգամանքը, վոր յերբ կուակցությունը փաստերով նեղը լծեց նրանց, նրանք կոմինտերնի Գործիումի 7-րդ պլենումում մի քիչ փոխեցին իրենց տոնը, վերջնականապես խճճվելով Հակասությունների մեջ, կամ լուսությամբ զանց առնելով ինդիքը:

Տրոցկու հիշյալ պնդումը յերբեք պատահական համարել չի կարելի, վորովինեն դա լիովին զուգաղիպում և վոչ միայն հասարակական որինաշափությունների վերաբերյալ նրա ունեցած մետաֆիզիկական հատկացողությանը, նրա բաղմանքին՝ փոխարինելու լենինիզմը հակասեղությանը, նրա ուղամանքին՝ դուգաղիպում և իմպերիալիզմի մասին նրա ունեցած եկլեկ-

արկ կոնցեպցիային, վորը հիմնված եր հենց այդպիսի մեթո-  
դուղիքիայի և այդպիսի հաշիվների վրա:

Իմաստերիալիզմի արցեկիստական կոնցեպցիան եյապես հան-  
գում և այն բանին, վոր չի ընդունում իմաստերիալիզմը վոր-  
պիս կապիտալիզմի հատուկ ստադիա: Բավական ե առել, ինչ-  
պես ընդգծել ե այդ ընկ. Սատալինը կոմինաերնի Գործկոմի 7-րդ  
պլենումում, վոր արցեկիզմը յերբեք չի վկամեցել համականալ իմ-  
պերիալիզմի անտեսական եյությունը, այն եյությունը, վոր  
Լենինը նկատում եր օտքառ մրցակցությունը մոնոպոլիայով  
փոխարինելու մեջ:

Բայց և այս անսակետից Տրոցկին չի կարող պարծենալ իր  
որիպինալությամբ, վորովհետեւ նա կրկնում էր լոկ կառուցկիա-  
կան ցանցառությունները: Ամենքին հայտնի յե, վոր հենց Կա-  
ռուցկին առարջում կերպով ձգտում էր անրմինարանական հոգ-  
նեցուցիչ խորհրդակցությունների ժխորում խլացնել այդ եյու-  
թյունը և վերջինիրդու հրամցնել իմաստերիալիզմը վորպիս լոկ  
քաղաքականություն, այլ վոչ թե ամենից առաջ եկոնոմիկա,  
կապիտալիզմի վերջին և հատուկ ստադիա: «Իմաստերիալիզմը, —  
զրում և կառուցկին, անշանակում և քաղաքական հարցերի մի  
առանձին անսակ, վորոնք նշվեցին կապիտալիզմի նորագույն  
Փաղի հետ, սակայն յերբեք նրան չեն դուզադիպում» («Իմաստ-  
երիալիզմ», եջ 1):

Մինչև իմաստերիալիզմը քաղաքական հարցերի առանձին ան-  
սակ՝ հայտարարելը, վորոնք չչեն զուզադիպում նորագույն  
Փաղինց, հետևապես պատահական են և հատուկ չեն այդ  
Փաղին, կառուցկին կարողացել եր արդեն նորագույն Փաղի վեր-  
լուծությունից խուսափել և փաստորեն ժխտել այն վորպես այդ-  
պիսին: Այսուհետեւ պարզաբանելով իմաստերիալիզմի իր բնորո-  
շումը, նա ասում է, թե քնրա եյությունն այն ե, վոր բարձր  
կապիտալիստական զարգացում ունեցող յերկիրը ձգտում է  
միացնել իրեն մեծ չափով գյուղանտեսական շրջաններ, ուշա-  
գրություն չզլարձնելով, թե ինչ տարրերով ճն բնակված այդ  
շրջանները» (նույն տեղում, եջ 2):

Իմաստերիալիզմի անտեսական եյությունը ժխտելու նույն վոր-  
մերը մենք անում ենք կառուցկու նոր ապալութեալիկ զառան-

շանքների մեջ՝ «Պատմության մատերիալիստական ըմբռնումը»  
դրվում:

Սակայն վոչնչով պակաս ջանք չի թափում այդ ուղղու-  
թյամբ Տրոցկին: Ժն՛ոչ բան և խմբերիալիզմը: Դա, — զայցատրում  
և նա, — կապիտալիզմի ձգումն և վերջ տալ մանր պետություն-  
ների դոյցությանը (տե՛ս Կոմինտերնի III կոնդրեսի սղաղը.  
Հաշվ. էջ 42): Ահա քեզ իմպերիալիզմի կառուցկիսական բացան-  
ըության արոցկիսական վարիանտը: Յերբ մի անդամ Տրոցկին  
վճռել և անտեսել իմպերիալիզմի անտեսական երակցումը, վոր-  
պես կապիտալիզմի առանձին ստաղիս, նաև այլքան գործ չունի  
այն բանի հետ, մոր արդպիսի ձգումն ամելի կամ պակաս չա-  
փով հատուկ եր նաև վաղ, նույնիսկ զառական կապիտալիզմին  
(չե՞ վոր փաստ և, վոր բազմաթիվ մանր պետություններ պրե-  
կեցին անկախությունից և ընդհանրապես դոյցության իրավուն-  
քից վոչ իմպերիալիզմի շրջանում):

Իմպերիալիզմը պարզապես իբրև Շմանր պետությունների  
գոյությանը վերջ տալու ձգումն (վորպիսի՛ քնքուշ վոճ — Հ.  
Հ.) պատկերացնելու այսպիսի փութաջան ձգուման գեղագրում ի-  
դուր և սպասել Տրոցկուց, թե նա կարող է հաշվի առնել այն  
Շմանրամասնիկը, մոր իմպերիալիզմը, ինչպես արդ ցույց  
տվեց, որինակ՝ համաշխարհային պատերազմը, յերբեմն ինչն և  
ստեղծում մանր պետություններ, վոր անդամ մեր ուրեմում ճա-  
պոնական իմպերիալիզմը իր ունտեների ամինների ուժով կա-  
րողացավ ստեղծել Մանդուռ-Գոն:

Չե՞ վոր այդ մոմենտը նույնպես կապված է իմպերիալիզմի  
անտեսական երակցան, նրա մոնոպոլիսական բնության հետ,  
վորովհետեւ այլպիսի անվանական պետությունների ստեղծումը  
յերբեմն ամենահարմար և եժանութին վարագույրն է քողարկե-  
լու համար մոնոպոլիսական կապիտալիզմի ամենավարշելի չա-  
հաղործումը, մասնավորապես, յերբ անհրաժեշտ և մաներել  
մյուս իմպերիալիստական մրցակցի դեմ:

Սակայն անհրաժեշտ և ընդդեմ, վոր Տրոցկին, Կառց-  
կու նման բնորոշելով իմպերիալիզմը, իհարկե, պետք և ընդ-  
հանրապես վոչ միայն ուշազդություն չդարձներ մոնոպոլիսանե-  
րի դերի վրա՝ կապիտալիզմի բոլոր հակասությունները սրելու

գործում, այլ նույնիսկ բանը հակառակ լույսի տակ ցույց տար ։ Նա, որինակ, անհրաժեշտ համարեց զեել այսպիսի հովվերդական պատկեր՝ մոնոպոլիաների և առևտությունների փոխհարաբերությունների մասին։ «Նույնիսկ մոնոպոլիանական դրության մոտ գտնվող տրեսոր, —ասում եր Տրոցկին, —իր տուաջ խընդիր չի գնում յուրաքանչյուր առվարձ մոմենտում ծածկել իր արտադրանքով շուկան ամբողջությամբ։ Ենթակի վերելքի լրջանում տրեսաները թույլ են տալիս հաճախ իրենց կողքին գոյաւթյուն ունենալու վոչ տրեսացած ձեռնարկությունների, հնարավորություն տալով նրանց ծածկելու ազելացած պահանջը և այլպիսով ազատելու իրենց կապիտալի նոր վտանգավոր ներդրումներից» (Տրոցկի, «Կ սոցիալիզմ և կ կապիտալիզմ», եջ 61)։

Յեվ ահա, յեթե բուրժուազիայի կլոուն Տրոցկին հիշում ե մոնոպոլիայի մասին, ապա նա դրան տալիս և այնպիսի դույն, վոր այդ հիման վրա կարելի յե ծանոթանալ, տանը՝ ինչպես արտեղ՝ մոնոպոլիաների «բարեսիրու հաշվողությանը» «վայրենիների» նկատմամբ, սակայն վորմեա պատկերացում ստանալ կապիտալիզմի հակառակությունների ուժեղացման մասին մոնոպոլիաների ազդեցության տակ — այդ արդեն յերբեք չի կարելի։

Իսկ հիրամի՞ մոնոպոլիաների և առևտությունների միջև գոյություն ունի այն հարաբերությունը, ինչ նկարագրում ե Տրոցկին։ Մի կողմ թողնել մոնոպոլիաների իսկական «քաջազործությունները» ամեն ինչ իրենց հպատակեցնելու, խեղդելու նրանց, վորոնք չեն յենթարկվում, չեն հաշտվում։ Նրանց ճնշումներին ու կամայականություններին և հորինել նմանությունակ քաղցր «եղբաթներ»—սա յե հենց ապոլոգետիկ լարախաղացության կատարյալ տեսակը։ Տրոցկու այլպիսի «քաջազործությունները» յեղակի չեն, վորոնց մեջ չի հշշվում անդամ այն մասին, վոր Հակառակությունը մոնոպոլիաների և առևտությունների միջև մեկն և իմպերիալիզմի ամենախոր հակառակություններից։ Հետևապես, մենք այսեղ դործ ունենք ուղղակի Տրոցկու մեկ փորձի հետ՝ սվազել մոնոպոլիայի դերը՝ կապիտալիզմի հակառակություններն ուժեղացնելու և սրբելու գործում։

Այս բոլոր առածներից հետո, արդարությունը պահանջում

և առել, վոր Տրոցկին իր ձեռվ հետևողական է, յերբ առաջազրում և այն դրույթը, թէ՝ իմպերիալիզմի ժամանակ զարդացման անհավասարաչափությունը թուլանում է։ Այդ դրույթը տրամադրանական յեղբակություն է, վոր բայխում և հասարակական որինաչափության վերաբերմանը ունեցած նրա մետաֆիզիկ յելակեաներից, դա ուղղակի շարունակությունն է այն գծի, վոր Տրոցկին տանում է՝ բացասելով այն, վոր իմպերիալիզմը հանդիսանում է կապիտալիզմի հասուլ ստարիսան, դա արտահայտությունն է իմպերիալիզմի տնտեսական եյտության անտեսման և ապա այն անժեխտելիք իրողության քողարկման, վոր այդ եյտությամբ անհամեմուրեն պարմանավորված և կապիտալիզմի բոլոր հակասությունների անասելին չափերով սրումն իմպերիալիզմի շրջանում։

Մի խոսքով հակառեղափոխական Տրոցկին բոլոր գծերով աներկիցմաստ իր բուրժուատ-ապոլոդեանիկ դրույթները հակադրում չենթիւան անալիզին։

## V

Լենինը վերոհիշյալ մեջքմբման մեջ ցույց տալով իմպերիալիզմի յերեք առանձնահատկությունները, հենց նույն տեղում ավելացնում է, վոր՝ Հազար մըցության փոխարինովելը մոնուուլիայով իմպերիալիզմի արմատական տնտեսական գիծն և, նրա եյտությունը՝ («Сочинения» Հատոր 19-րդ, եջ՝ 301)։ Այս բանը Լենինն ընդգծում է վոչ միայն Շմապերիալիզմը և սոցիալիզմի պառակտումը՝ հոգվածում, վորից և վերցված և տվյալ մեջքերումը, այլ և իր մյոււմ աշխատություններում և բազմիցս՝ կապիտալիզմի բարձր ստարիսային նվիրված իր գոյխավոր աշխատության մեջ, այսինքն՝ «Շմապերիալիզմ»-ում։ Նա այստեղ դրում է, վոր ճմոնոպլիսան կապիտալիզմի նորագույն Փազի վերջին խոսքն եւ, վոր «անտեսական մոնոպոլիայի մեջ և ամեն բան», վոր «արտադրության կենտրոնացման հետեւանքով մոնոպոլիաների առաջ գալն ընդհանրապես հանդիսանում է կապիտալիզմի զարգացման ժամանակակից ստարիսայի ընդհանուր և հիմնական որենքը» (Յերկերի ժող. 19-րդ Հատոր, եջ՝ 207, 85)։

Մարքոս կապիտալիստական կուտակման իր տեսության մեջ վերլուծելով կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման հիմունքները և եյությունը, նրանց անխռութիւնիությունը և անհրաժեշտությունը, արդեն դրանով իսկ բանալի տվեց հասկանալու, թե ինչպես և ինչու յէ աղաս մրցակցությունը փոխարինվում մոնոպոլիայով։ — «Յուրաքանչյուր կուտակում, — զբում եր Մարքոս, — զառնում և նոր կուտակման միջոց։ Վորպես կապիտալ գործողության զանգվածի մեծացման հետ միասին նաև մեծացնում և նրա կոնցենտրացիան առանձին կապիտալիստների ձեռքում և այդպիսով ընդարձակվում են մեծ չափով արտադրության հիմքն ու արտադրության սպեցիֆիկ կապիտալիստական մեթոդները» («Կալիտա» Հատոր I, էջ 497)։ Իսկ կապիտալի կենտրոնացումը վորպես «համակենտրոնացում դումարված կապիտալների», լրացնում և այդ սղոցներ նրանով, վոր վոր միայն ուժեղացնում և արտադրական միավորների աճը և չափը, այլև կրճատում և իրար դեմ մրցող կապիտալիստների թիվը։

Ենինը նախ և առաջ հենց արտադրության համակենտրոնացման մարդարան ուսմունքի հիման վրա բաց արեց մոնոպոլիաների անհրաժեշտ ծագման արմատները։ Նա ցույց տվեց, վոր մոնոպոլիայի դժբանը հանդիսանում է կապիտալիստական արտադրության համակենտրոնացումը, վորովհետև վերջին իր զարգացման վորոշ աստիճանի վրա չի կարող ընդուող չմոտեցնել մոնոպոլիային, քանի վոր նախ՝ ուժեղ համակենտրոնացման բաղայի վրա առաջ յեկած հսկայական ձեռնարկությունների համար հեշտ և իրար հետ համաձայնության դաշտ և յերկրորդ՝ ձեռնարկությունների խոշորացման և նրանց արտադրության չափերի ընդարձակման հետ հենց սերտորեն կառաված են մրցակցության պայքարի դժմարդությունները և տենչենցը՝ դեպի մոնոպոլիաները։

Ենինը սպառիչ կերպով հիմնավորելով այն ճշմարտությունը, վոր մոնոպոլիաների, կապիտալիզմի վերջին սպառիայի այդ կարևորագույն յերեսույթի առաջացման պմենախոր հիմքը հանդիսանում և հենց արտադրության համակենտրոնացումը, դրանով իսկ ջախջախեց Հելֆերդինգի և Բնեկ փորձերը՝ արտադ-

ևս առաջ մղելու իրենց ժաշված փոխանակային (меновայ), կոնցեպցիան։ Փաստ չե՞ն միթք, վոր Հիւֆիրդինը նույնիսկ իր շմինանաւական կապիտալը-ում չի ել մտածում ընդդժել, վոր կուղիտալիստական արտադրության համակենարոնացման զարգացման վորոշ աստիճանով և անհրաժեշտորեն պարբանավորվում մռնոպոլիսաների առաջացումը։ ընդհակառակը, նա իր բացատրությունների մեջ գոփանակային և այլ միջանկայտ հարաբերությունների վրա յև բնեուսմ իր ուշադրությունը։ Այդ միանգամայն հասկանալի յև, յեթե նկատի ունենանք ունենալուներին զեկավարող ձգտումը։ այն ե՛ իմպերիալիզմը կարել կապիտալիստական արտադրական յեղանակի զարգացումից՝ վորպես արտաքին մի պատահականություն, այլ վոչ թե վորպես իմանենատ անհրաժեշտության վրա հենված ետապ, կապիտալիզմի զարգացման վերջին ետապը։

Հենինը կարդիտալիստական արտադրության համակենարոնացումը դիտելով վորպես ամենախոր հիմքը մռնոպոլիաների առաջացման, չեր անփեսում, այլ այլ Փոնի վրա արժեքավորումներ նաև մյուս մռնենաների նշանակությունը։ Նա ցույց եր տալիս բանկերի գերի փոփոխությունը, յերբ նրանք հանդիս գալով արդեն վոչ վորպես սոսկական միջնորդներ, այլ վորպես Փինանսական կառավարական ոլիոդարիներ, իրենց առջեցությունն ու իշխանությունը տարածում են բազմաթիվ խոչոր մենարկությունների վրա և կոմքանե տնտեսական այլ ուժին, նույնիսկ դառնում են բուրժուազիայի պետական որդանի տնօրինողներ։ Այնուհետև, նա ցույց է տալիս դադութային քաղաքականության հիմունքների մեջ արձանագրվող այն նորությունը, յերբ աշխարհը բաժանված միերժացած լինելու պարմանեներում, վորպես զի կարելի լինի առանցուլվել հումուռի աղբյուրներով և կապիտալի ձեռնուու արտածությամբ ու դործադրությամբ, կենսական անհրաժեշտություն և դառնում մենաշնորհ կերպով իշխելու գաղութներում։

Մարգար և Սնդելսն ականատես եյին լոկ այն անցման շրջանին, վորը տանում եր գեղին կապիտալիզմի զարգացման մեջ տեղի ունեցող այդ նոր աեղաշարժերի բյուրեղացումը, իսկ այդ շրջանի մանրամասն անալիզը վիճակվեց տալ նրանց լավագույն

աշակերտներին՝ Լենինին և Ստալինին։ Յեզ խոկապես, Լենինը և Ստալինը բազմակողմանիորեն բացահայտելով կապիտալիզմի բարձրագույն ստադիայի վերջին խոսքից—մոնոպոլիայի եյությունը, լուսաբանեցին, թե ինչո՞ւ մոնոպոլիստական կապիտալիզմը պետք է վճռական նշանակություն հաղորդեր զարգացման անհավասարաշափության որենքին և այդ ամենից հանեցին առենառըժեքավոր յեղբակացություններ միջազգային պրոլետարիատի պայքարի ստրատեգիայի և տակտիկայի համար։

Մենք ցույց տվենք, վոր կապիտալիզմի անհավասարաշափության որենքը չպետք եւ դիտվի կապիտալիզմի հիմնական հակասության, այն և՝ արտադրության հասարակական ընույթի և մասնավոր-կապիտալիստական յուրացման միջն յեղած հակասության ու դրանից բղիսած մյուս հակասությունների հետ ունեցած կապերից դուքս, վորովհետեւ այդ որենքն ինքը հանդիսանում է վերջին հաշվով կապիտալիզմի արդ հիմնական հակասության կոնկրետ արտահայտություններից մեկը։ Յեզ յեթն արդ արդապես և, իսկ դա խոկապես վոր արդապես և, ապա ինքնըստինքյան հասկանալի յեւ, վոր արտադրության հասարակական ընույթի և կապիտալիստական յուրացման միջն գոյություն ունեցող հիմնական հակասության ուժեղանալը և սրբիլը չի կարող անհետնեանք անցնել կապիտալիզմի անհավասարաշափության որենքի համար և չի կարող իր հերթին այդ որենքի արտահայտության մեջ առաջ չքերել ուժեղացում ու սրում և ընդհանրապես վորակային փոփոխություն։

Այդ պատճառով, վորպեսզի ճիշտ հասկանանք կապիտալիզմի անհավասարաշափության զարգացման որենքի մոդեֆիկացիայի հիմունքներն իմաներիալիզմի շրջանում, կարեւոր և պարզել, թե ինչո՞ւ և ի՞նչպես մոնոպոլիստական կապիտալիզմը պետք է անհրաժեշտաբար ուժեղացնի և սրի կապիտալիզմի հիմնական հակասությունը և նրանից բղիսող մյուս հակասությունները։

Մարքսն արդեն հապիտավոր և համակենարոնացման պարզացման որենքի մոդեֆիկացիայի հիմունքների չափանիքունակության պարզեցում։ Ալբոյունաբերական ձեռնարկությունների չափերի աճը, —զրում և նա, —ամենուրեք յելակետ և ծառայում շատերի համատեղ աշխատանքն ավելի ընդարձակ չա-

գիերով կազմակերպելու համար, ավելի լայնուրեն զարգացնելու հստար նրա նյութական շարժող ուժերը, այսինքն՝ արտադրության զատ-զատ և հետամնաց պլրոցենները պրոդընկով կերպով զարձնելու հասարակականութեն միավորված և գիտականորբեն դեկավորվող արտադրության պրոցեններ («Էկապիտալ», հատոր 1, էջ 499):

Ցեվ ահա մոնոպոլիան ծնվելով բարձր զարգացած՝ կոնցենտրացիայի հիման վրա, ընդորկելով գերազանցապես գիշանտները, իր հերթին ավելի շատ և ընդարձակում իր այդ հիմքը, առել և թե՝ կոնցենտրացիան չեղած չափերի յև հասցնում:

Մենք նպատակ չունենալով մանրամասն իլլյուստրացիա կատարելու այս հարցի վերաբերյալ, բերենք միայն մի քանի թվեր ընդհանուր գաղղափար կազմելու համար կոնցենտրացիայի չափերի մասին։ Գերմանիայում 1925 թվականին կային հիմունակար և ավելի բանավորներ ունեցող 66 ձեռնարկություններ, վորոնց մեխանիկական շարժիչները 2՝ անդամ ավելի կարողություն ունեյին, քան 1,6 միլիոն մանր ձեռնարկությունների շարժիչները՝ միասին վերցրած։ ԱՄՆ-ում նույն թվին 1000-ից ավելի բանավոր ունեյին 996 ձեռնարկություններ, վորոնց մեխանիկական շարժիչների կարողությունը կազմում եր 12 միլիոն միու ուժ, մոտավորապես 2/3-ը Գերմանիայի վողջ արդյունաբերության մեջ յեղածի։

Խոկ ի՞նչ և նշանակում համակենտրոնացման այսպիսի առափնյանը, յեթե վոչ, հանրայնացման պրոցեսի վիճինարի աճում և արտադրության հասարակական բնույթի ավելի ուժեղ ընդգծում՝ կարպիտալիստական յուրացման անձեռնմխելիության պարմաններում։

Այստեղ չորսիվ ձեռնարկությունների և նրանց արտադրության խոշոր չափերի, չափաղանց ընդարձակվում են աշխատանքի ավելի հմուտ և համաձայնեցրած կազմուկերպման, արտադրական պրոցենների ուսցիոնալացման և տեխնիկական գյուտակն ու կատարելագործումները ավելի լավ և արդյունավետ հիմքերի վրա դնելու հարավորությունները։ Զի կարելի ժխտել, վոր կոնվեյերային սիստեմը, վորն իր կարպիտալիստա-

կան գործադրությամբ դարձել և բանվորների քրտինքը քամելու սարսապիելի միջոց՝ շահավետ կերպով կարելի յն ոպտապործել լոկ ամենախռոչոր մասնարկություններում։ Հետո, միայն մոնոպոլիստական դիզանաներին և մատչելի լայն եներգո-ղինվածությունը և գիտության ու տեխնիկայի այնպիսի հրաշալիքների գործադրությունը, ինչպիսիք են բլյումինդը, շանելինամամբիչ մամլիչ զաղղիյանը և այլն. միայն արդարին մեռնարկությունները կարող են նախաձեռնել այնպիսի համարձակ փորձերի, ինչպես որինակ մարակնյան յեղանակի կիրառման փոխարքեն քիմիական թթվացման միջոցով մետաղ ստանալը։ Ավելացրեք այդ ամենին մոնոպոլիստական դիզանաների ձեռքում կենտրոնացած հանգավայրերի և նրանց շահագործման հետանկարների հաշվառման կազմակերպումը, վորակյալ բանվորական և ինժեներական ուժերի գերազանց չափով կենտրոնացումն ու ողտագործումը գիտանաներում և այս ամենի ֆոնի վրա համաշխարհային չուկայի գերի անհամեմատ բարձրանալը, և այն ժամանակ կարելի կը լինի պատկերացնել, թե ի՞նչ առաջնանարդ և գծադրվում արտադրության հաստարակական բնույթը կապիտալիստական յուրացման պայմաններում և, հետևողութեա, ի՞նչ առաջնան սրբում և կապիտալիզմի ույուն հիմնական հակասությունը։ «Արտադրությունը, — գրում ե Լենինը, — դատօնում է հասարակական, բայց յուրացումը մնում է մասնավոր։ Արտադրության հասարակական միջոցները մնում են վորքաքանակ մարդկանց մասնավոր սեփականություն։» («Сочинения», համ. 19-րդ, եջ՝ 89)։

## VI

Լենինը խոսելով այն մասին, վոր ազատ ճըցակցության տեղի տալը մոնոպոլիսայի առաջ, վերջինում միտիստիկմիլը հանդիսանում և իմպերիալիզմի անտեսական եյություն, բնորոշելով իմպերիալիզմը հենց մոնոպոլիայով, միաժամանակ միշտ առանձնապես ընդդժել և մոնոպոլիսայի ահա այս կապիտալիստական բնույթը, յերբ դա վոչ միայն չի վերացնում կապիտալիզմի հիմնական հակասությունը, այլ ընդհակառակը, այդ հակասությունն ուժեղացնում և և սրում։ Յեթե կապիտալիստա-

կան յուրացումը մնում ե իր լիակատար ուժի մէջ, ապա ազատ մրցակցությանը փոխարինող մոնոպոլիան անխռուսավելիորեն հանդես և գալիք վոչ միայն վորպես հետևանք, արդյունք մըրցակցության, այլև վորպես յետիկետ և սկիզբ մրցակցության նոր և ել ամելի կատաղի ձևերի, լուծելու համար կապիտալի գորդյան հանողությը, այսինքն՝ վճռելու համար այն, թե վո՞ր մոնոպոլիստը կամ մոնոպոլիստների վո՞ր խումբը պետք և անմիջական արտադրողներից լստ հնարավորին շատ հավելյալ արժեք քամի և սեփականացնի:

Մարքոս Գրուդոնի հետ ունեցած պոլեմիկայում հանճարեղ կերպով նախատեսեց մրցակցության և մոնոպոլիայի այս դիալեկտիկան : «Պրակտիկ կյանքում, — գրում ե նա, — մենք հանդիպում ենք վոչ միայն մրցակցության, մոնոպոլիայի և նրանց անտապոնիզմին, այլ նույնպես նրանց համադրությանը, վորը վոչ թե Փորմուլ ե այլ շարժում։ Մոնոպոլիան մրցակցություն և առաջացնում, մրցակցությունը՝ մոնոպոլիա։ Մոնոպոլիստները մրցակցում են իրար հետ, մրցակիցները դառնում են մոնոպոլիստներ։ Համադրությունն այն ե, վոր մոնոպոլիան կարող ե դիմանալ լոկ մշտական մրցակցության պայքար մղելու շնորհիվ» (*Հնդկա ֆիլոսոփիա*, եջ 139) :

Նույն միտքն ե նաև արտահայտում Աննենկուլին ուղղած իր նամակում : Այստեղ Մարքոն ընդդում ե, վոր մրցակցության և մոնոպոլիայի այս փոխադարձ անցումը և փոխադարձ ներթափանցումը կապիտալիզմի համար ռատեղծում ե ամելի դժվարին և ավելի խճճված դրություն։ (Նույն տեղում, եջ 166) : Հենց արդպիսի դիմակետիկական վորով և ներծծված մոնոպոլիայի լինինյան անալիզը։

Լենինն անողոք կերպով խարազանում և մերկացնում եր նրանց, ովքեր փորձում ենին հաշմի չառնել իմպերիալիզմի իրականության, վոչ թե առերևութային ու մտացածին, այլ կոնկրետ իրականության բազմակողմանիությունը, բազմերանդությունը և հակասականությունը։ Այլպիսի փորձերով, ինչպես հայտնի յե, քիչ ջանք չի թափել ընկեր Բուխարինը, դեռ, որինակ, կուսակցության համար նոր ծրագիր կազմելու

շուրջը՝ տեղի ունեցող գիսկուսիայի կապակցությամբ։ Գիտահաճ կերպով արսուլյուսի վերածել, զուհավորել խմբերի ալիքմի, խմբերի ախտական մոնոպոլիայի տռանժին կողմերը, դրա հիման վրա Հորինել մաքուր խմբերի ալիքմի միջաժամունքը, — ել ուրիշ ի՞նչը կարող ե ավելի վոչ գիտական, հակամարքափառական լինել, քան իմպերիալիզմի հակասական իրականությունը պնդազարդող այս անսանձ աքսորակցիան։

Իմպերիալիստական ամենահասունացած և ամենատիպիկ յերկրում իսկ մտնոպոլիստական կապէտալիզմը չի կարող բոլորովին արմատախիլ անել ազատ մրցակցությունը վորոշ նյուղերում, և ինչպես գրում ե Լինինը՝ «մոնոպոլիստներն անելով ազատ մրցակցությունից, չեն վերացնում այն, այլ գոյությունն ունեն նրա վրա և նրա հետ միասին, զրանով ծնելով մի շարք հատկապես սուր հակառակություններ, բազիսումներ, կոնֆլիկտներ» («Сочинения», հատ. 19-րդ, հջ 142)։

Իմպերիալիզմը չվերացնելով մրցակցության և մոնոպոլիստյի հակադրությունների միասնությունը, հատուկ կերպարանը և տաղիս նրանց փոխադարձ ներթափանցմանը, յերբ առաջին պլան և քաշվում ամենաշեշտավոր մրցակցությունը մոնոպոլիստական միավորումների միջն, յերբ ավելի քան տեղին և Մարքսի վերոհիշյալ նկատողությունը, թե՝ մրցակցության և մոնոպոլիայի ոլքալեկտիկուն միայն ավելի յի գժվարացնում և խճճում կապիտալիզմի գործերը, յերբ բոլոր գծերով խորանում և սրբում կապիտալիստական արտադրական յեղանակի անիշխանական բնույթը, քառայնությունը։ Պարզ ե, վոր արդարիսի պայմաններում խոսք անդամ չի կարող լինել կապիտալիզմի զարգացման անհավասարաշափության նվազման կամ թուլացման մասին։

Եւզ յեթե այսուամենայնէլ Տրոցկին salto-mortale-ով շանում եր թռչել արդ պարմանների վրայով, հավաստել, վոր թռւլանում և կապիտալիզմի զարգացման անհավասարաշափությունը, այլ արդեն վերաբերում և ազուրդետիկ լարախազացի խելագատակի տարողությանն ու կարողությանը։

Մենք խոսեցինք անող հանրայնացման և նրա մոնոպոլիստական ձևի մասին, վորպես քարձը կետի՝ հիմնական հակ-

սության զարգացման : Իսկ դա , իհարկե , չե կարող վերին առտի-  
հանի անհավասարաշափություն լմացնել մի կողմից բարձր  
շափներով կենտրոնացած և հանրայնացած մոնոպոլիստական  
ձեռնարկությունների , իսկ մյուս կողմից՝ «վայրենի» ձեռնար-  
կությունների զարգացման մեջ և շխորացնել նրանց միջև ան-  
դունքը (վորից այնպես քնքըլորեն հրաժարվում ե Տրոցկին) , յե-  
թե նկատի ունենանք , վոր , ինչպես գրում ե Լենինը՝ «մաքուր  
իմպերիալիզմ» առանց կապիտալիզմի հիմնական բաղայի յեր-  
րեք գոյություն չի ունեցել վու մի տեղ , գոյություն չունի և  
յերբեք գոյություն չի ունենա» («Сочинения» , եջ՝ 131) :

Այս իհարկե , ինդըի ոճու մի մասն ե , վորովհետեւ կենտրո-  
նացման պրոցեսում ընդհանրապես նկատվում ե անհավասարա-  
շափություն : Իսկ ի՞նչ ե դրիխում նրանից , վոր ամենալայն կոն-  
ցենտրացիան և բաղմակողմանի հանրայնացումը կամ այլ կերպ  
ասած՝ այնպես չոչափելիորեն արտահայտված արտագրության  
հասարակութան ընույթը հանդես ե դաշին մոնոպոլիայի ձևով :  
Այս հարցը մեղ նկատել ե տալիս , վոր արագ աճը և նեխումը  
մոնոպոլիայի մեջ յերկու ընդդիմադիր տենդենցիներ են , վորանք  
սերտորեն կապված են ձեւի և բազանդակության պառակտման  
մեր մատնանշած խորացման հետ և , ավելին , պարմանավորված  
են վերջինով , վորը հոմանիշ է կապիտալիզմի հիմնական հակա-  
սության սրմանը :

Մարքսն աշքի առաջ ունենալով ընդհանրապես աշխատանքի  
միջոցների գործադրության կապիտալիստական ձևը՝ պրում  
եր — «Մի կողմից այն հանգամանքը , վոր հիմնական կապի-  
տալի զանգվածը ներդրվում է գործի մեջ վորոշ ընական ձևով  
և պետք ե գոյություն ունենաւ այնուղղ կյանքի վորոշ միջին  
ժամկետ , պատճառ ե դառնում , վոր մեքենաները և այլն  
մացվեն միայն աստիճանաբար և արդ պատճառով արգելը են  
հանդիսանում աշխատանքի կատարելագործված միջոցների ա-  
րագ և համատարած գործադրության : Բայց մյուս կողմից՝  
մրցակցության սուանձնութեա վճռական հեղաշրջումներին ու-  
ղեկցող պայքարն ստիպում ե փոխարինել աշխատանքի հին մի-  
ջոցները , դեռևս , մինչև նրանց բնական մահը , աշխատանքը նոր  
միջոցներով» («Капитал» , համ . 2-րդ , եջ՝ 142) :

Մարքսն այստեղ արդպիսով ընդգծում է, վեր աշխատանքի միջոցների գործադրության կազմիտալիստական ձևի հետ կարպված է նոր տեխնիկայի, կատարելագործված մեքենաների անհավասարաչափ գործադրությունը։ Յեթև մրցությունը կարող է մտցնել վորոշ ուղղումներ այս անհավասարաչափության մեջ, պարտադրելով կատարել մշտական կազմիտալի վաղաժամ վերակառուցում, ապա այլպիսով վերջին հաշվով ընդարձակում և անհավասարաչափության դաշտը, վորովհետեւ մշտական կազմիտալի յուրաքանչյուր արժանական վերակառուցում ավելի և ավելի կրնատում է նրա ճկումությունը և առաձգականությունը նոր հեղաշրջումների անհրաժեշտության հանդեպ, հեղաշրջումներ, վորոնք բայցում են արտադրության կազմիտալիստական յեղանակի տեխնիկական հիմքի հեղափոխական բնույթից։

Աշխատանքի միջոցների կազմիտալիստական դրության տըմպյալ ատրիբուտն առանձնապես ցայտուն կերպով արտահայտվում է մոնոպոլիստական կազմիտալիզմի ժամանակ։ Մոնոպոլիստաները ծնվելով մրցակցության փոթոքում, հենվում են նույնազեն մրցակցության վրա, վորագեղի հաղթահարեն իրենց մրցակիցներին, վորագեղի վերջականացեն պահեն իրենց ձեռքում և հնարավորության չափ ավելի ընդարձակեն դերշահութիւն մոնոպոլիստական տիրապետության զոտիներն ու աղբյուրները։ Նրանք այդ մրցակցության ճնշման տակ ստիպված են այս կամ այն չափով դիմելու արտադրողական ուժերի, տեխնիկայի զարգացման հոկարական հնարավորությունների ուղարկութմանը, վորոնք (հնարավորություններ) ներփակված են արտադրության հասարակական բնույթի մեջ, վորը, ինչպես տախոք, մոնոպոլիստական կազմիտալիզմի ժամանակ ավելի յեւ չեշտվում։ Այստեղից ել առաջ ե դալիս բլյումինդի, ստանկոմբինատի և այլ կատարելագործված միջոցների գործադրության պրակտիկան, այստեղից ել կյանքի յեւ կոչվում հռչակված Փորդիզմը և այլն։ Ահա ի՞նչի մեջ ե արտահայտվում մոնոպոլիստի տեխնիկացներից մեկը։

Բայց բանն այն է, վոր այդ բոլոր կատարելագործություններն անխուսափելիորեն կազմված են հիմնական կազմիտալի հոկարական ուղմացման հետ, վորպիսի հանգամանքն ընդ-

հանրապես չի կարող վորոշակի կերպով չկապել ինվեստիցիա կատարողների ձեռքերը, վորէ մասին Մարգար վերուշյալ մեջ- բերման մեջ մատեացույց և անում. իսկ մենաշնորհային դրու- թյունն ուղղակի մզում և առաջ թերում հանգչելու գագինիների վրա, արտահայտելու արդեն այլ տեղանց, ուրիշ խոսքով՝ նե- խում: Վերջինս ինքը հանդես և գալիս արդեն վորոշես մրցակ- ցության հասուկ ձև, յերբ նեխովող մոնուպլիաներն ամեն կերպ- կաշկանդում են արժեքավոր տեխնիկական-ռասացիոնալիզատորա- կան նորամուծությունների գործադրությունը, յերբ բազմաթիվ նոր դյուտերի իրավունքը (պատեմատը) գնում են մոնուպլիա- ները և թողնում անորոշադրելի, վորոշողի զրկեն իրենց մըր- ցակիցներին դրանք ուղարկութելու հարավորությունից:

Զիսոսելով Լենինի «Խմբերիալիզմ» դրսում բերած հանրա- ծանոթ որինակի մասին (Ուշենսի շիշ պատրաստող մեջնայի պատճենոն անողուազործելի թողնելը), հենց բավական և միայն նշել ժամանակակից այնպիսի վիճակեր, ինչպես որինակ՝ սինթե- տիկ բնողինի արտադրության խափանումը. (պատճենող զնել և Գերմանիայում «Ստանդարտ ՌԱՀ» և դրել մահուղի տակ), սին- թետիկ կառւզուկի արտադրության դրծի արգելակումը (ք միշտ այլոց դա այս ժամանակ, յերբ տովյալ պրորեմն արդեն վճռված և ԽՍՀՄ-ում), քիմիական միջուցներով մետաղներ պատրաստելու հոյակապ դյուտը լայնորեն գործադրելու ասպարիզում հանդես բերվող ձգձգումները և այլն, և այլն:

Նեխում այս ձևը սակայն, յերբեք չի կարող դառնալ մըր- ցակցության միակ և բացարձակ ձևը, վորովհետեւ նա միայն հակադրվելով արտադրողական ուժերի զարգացման միջոցով մըրցակցության ձեին՝ ստանում և մըրցակցության հասուկ ձևի նշանակություն: Չե՞ վոր պեսք ե լինի անմիջական սպառնալիք նոր կատարելագործություններ մացնելու ուղղությամբ, վոր- պեսզի ձգտում առաջ դա խանգարելու, արգելակելու և դժգա- րացնելու դժանց իրավուրծումը: Ընդհանրապես ասած, ինչպես գրում ե Լենինը՝ «արտադրության ծախցերն իջեցնելու տեխնի- քական բարելավումների դործադրության միջոցով շահույթը բարձրացնելու հարավորությունը գործում և հոգում փոփո- խության» («Сочинения», հ. 19-րդ, եջ 151):

Մյուս կողմից, վոչ մի մոնոպոլիա չի կարող յերաշխավորել իր դրած արգելակների անհաղթահարելիությունը:

Ավտոմոբիլային «արքա» Ֆորդին դեմ և կանգնած «արքա» Մորդանը, մի այլ ավտոմոբիլային Փիլմայի՝ «Ձեներալ Մոտոր»-ից տերն ու տնօրինը, վորը չէ կարող սառնասիրած գիտել, թե ինչպիս իր հակառակորդը դժուանում և հակայական մենաշնորհային ողուաները: Այն ժամանակ, յերբ Ֆորդը պատրաստվում է ինքնարավավական նիրճել՝ նրան խփում և Մորդանը հենց նրա զենքով, փոխադրելով Փորդիունի իր «Ձեներալ Մոտոր»-ը արդեն այսպիսի երական բարելավումներով, վորոնց շատ դժվարություններով կարող եւ հետեւ Ֆորդը, հակայական ներդրումներով կարգած վոր ու ձեռով: Դրանով ել Մորդանը շատ կարճատե և զարձնում Ֆորդի «մեղրամիւը»:

Անդիայում ողուազատի արտադրության մոնոպոլիաները, վորապեսզի արժեքադրկեն իրենց հին, խոշոր կապիտալ ներդրումները պողպատի ձուլման պուլընդյան և քեսսեմերյան յեղանակների ելիքառման գործում, յերկար ժամանակ աշխատում եյին դիմադրել բազիսյան կոնվերտերների դործադրությունը, վորը հարավորություն եր տալիս խոշոր չափով եւանացնել պողպատի արտադրությունը: Այնինչ, գերմանացի պողպատ արտադրող նորելուկ մոնոպոլիսաները, վորոնց ուսներին չերծանքանում պուլընդյան և քեսսեմերյան բեռը, վոչ մի դժվարություն չկրեցին զնալ հոսանքի դեմ և վերցնել ու գործադրել բազիսյան կոնվերտերներն ու այլպիսով ջախջախել պուլընդյան ու քեսսեմերյան յեղանակին կառչած: Իրենց Անդիայի կոլեկտաների համառությունը:

Ենի յեղակի չեն այնպիսի փառաեր, յերբ արտադրողական ուժերի զարգացումն առաջ մղելու մեռով մրցողները ծանծաղութի վրա յեն նստեցնում նեխման մեռով մրցողներին:

Դժվար չեն այս ամենի մեջ նկատել անհավատաչափ զարդարացման չափազանց ուժեղանալը և նրա թուիչքաձև բնույթը: Այլ կերպ՝ ինչպիս վորակել այնպիսի փառա, յերբ հենց մեր նշած հանդամանքների ուժով՝ ամենազորեղ մոնոպոլիան սրբնթաց աճից հետո ակտում և նեխմել, իսկ մի այլ մոնոպոլիա չանցնելով առաջինի զարդացման աստիճաններով, հան-

կարծ վոչ միայն հանում, այլև անցնում և նրանից։ Իսկ զու հնարավոր և լինում այն պատճառով, վոր վերջինս վոչ թե պարզապես վերաբառդրում և նրա ամենաըարձր աստիճանը, այլև վերաբառդրում և դուրս դալով նրա բացերը և ավելացնելով նոր առավելություններ, վոր նա ուղարկելով տեխնիկայի մեջ հաճախակի դարձող հեղաշրջումներով, մացնում և այնպիսի կատարելագործություններ, վորոնց գործադրումը հակայական կապիտալ ներդրումներով իրենց ձեռքերը կարճեցրած նեխվող մոնոպոլիաների բանը չեւ։

## VI

Այն ամենը, ինչ քնորհչում և առանձին մոնոպոլիաների շարժումը, իհարկե, չի կարող իմագերիալիզմի ժամանակ հատուկ չլինել ընդհանուր առամբը ազգային-անտեսական մասնիկների շարժմանը։ Չե՞ վոր առանձին մոնոպոլիաները կախված չեն ողի մեջ, այլ զարգանում են այս կամ այն յերկրում և բանկերի հետ համանելու միջոցով իրենց որբիտի մեջ առնելով բութուական սկսուաթյունը, գերիշխող դիրք են զբավում ավյալ յերկրի եկոնոմիկայում և իրենց զբոշմն են գնում նրա շարժման ամրողջ ընթացքի մրա։ Իսկ արտեղից ել մոնոպոլիայի յերկու տենդենցները — արագ աճը և նեխումը՝ վրապես արտահայտություն անհավասարաշատի զարգացման ուժեղացման, նրա ընդհանուպղական-թուիչքամեն ընույթի — չեն կարող չունենալ ազդային-անտեսական կերպարանք։

Այսպես որինակ՝ այն ժամանակ, յերբ վերջին տասնամյակներում իմագերիալիստական Անդլիան արտահայտեց վերաբանցարկեան նեխման, անհավասարաշատի զարգացումը սրոց ընդհատվողականության տենդենցներ, այդ նույն ժամանակ այնպիսի համեմատաբար յերիտասարդ իմագերիալիստական յերկրը, ինչպիսին և Գերմանիան, Հանդես բերելով արտադրողական ուժերի արագ աճման ուժեղ տենդենց՝ կատարեց այսպիսի թոփչը, վոր նախքան պատերազմը ստեղծեց այդպիսով վտանգավոր սպառնալիք Անդլիայի համար։

Այս տեսակետից, յերբեք եպիդողիկ չե մեր վերև բերած փառաը, յերբ բազիսային կոնվերտերը յերկար ժամանակ հաշածվելով Անդլիայում, ընդհակառակը՝ Գերմանիայում զանում

Ե ջերմ ընդունելություն, վորովհեամ այդ փաստը հանդիսանում և ընդհանուր առմամբ այդ յերկու յերկների հակառակ տեսնդնենքի մարնակի արտահայտություն:

Բայց շատ գուհեկի կլիներ և ուղղակի ճիշտ չեր լինի փնտուել վորովակի սահմանադիմ արդ յերկու տեսնդնենցների միջև և վերապրել մեկ յերկրին՝ նեխման համատարած գիծ, իսկ մյուսին՝ աճ: Զե՞ վոր այնուամենայնիվ, նույն Անդլիայում, որինակ, հետապատերազմյան շրջանում պետության ողնությամբ քիչ փորձեց չարվեցին ռացիոնալիզացիայի յենթարկելու խիստ կերպով հետ մնացող քարածխի արդյունաբերությունը և չի կարելի ասել, վոր ձեռք առնված միջոցները ապարագյուն անցան:

Ուստի և խոռը կարող եւ լինել միայն տեսնդնեցի մասին, ավյալ յերկրի և տվյալ ժամանակաշրջանի համար ընորոշ տեսնդնցի մասին: Մանավանդ վոր նեխումը չի հանդում լոկ արտադրողական ուժերի զարգացման արհեստական կաշկանդման, այլ արտահայտվում եւ նաև, որինակ, զբա ուժնացման զուգակցող պարագայիտիզմի մեջ:

Ամենայերի խստարդ կմազերիալիստական պետությունը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ առանձնապես աչքի ընկան զարգացման արագ և թոփչքանձ տեմպով: Բայց սա արդյոք նշանակում է, վոր այստեղ մենք դործ ունենք լոկ անման տեսնդնեցների, այլ վոչ թե դրա հետ մեկնեղ նաև նեխման տեսնդնեցների հետ: Իհարկե, վոչ: Յերբ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ամենակարող «Ճորդը» հենց այդ ամենակարողության շնորհեց սկսեց նեխման տեսնդնեցներ արտահայտել և այդպիսով յենթակա դառնալ «Ճեներալ Մոաորսի» հարվածներին, յերբ նաժամանակակից տնտեսական ճգնաժամի կապակցությամբ ավտոմոբիլային մասերի արտադրությունը բարձր տեխնիկայի վրա կառուցված դիզանտներից փոխադրեց մանը մեռնարկությունները, ապա այս, ինչպես և նման այլ փաստերը վկայում են, վոր չի կարելի մի համատարած գիծ ընդունել նեխման կամ անի համար, թեև չի կարելի ժխտել, վոր ԱՄՆ-ն իրենց արտադրողական ուժերի զարգացմանը դնում են առաջ՝ վոչ միայն Անդլիուց, այլև Գերմանիայից: Իսկ դա նշանակում է, վոր, ինչպես ընդգծել են Լենինը և Ստալինը, նեխման տեսնդնեցի բուն արտա-

Հայուսության մեջ նկատվում ե անհավասարաչափություն և նրա ռաժեղացումը:

Առավել առ իբականության անթույլատրելի աղավաղում կլինի, յեթե ընդհանրապես ամրող իմակերիալիզմի համար միորպես արտուրուտ ոլիոսի այլ յերկու տենդենցներից վորեն մեկը, վոչ միայն ամճան, այլև նեխուման տենդենցը:

Բոլորին հայունի յե արտցկիստական պրոգնոզը համապարփակ ստագնացիայի մասին: «Յեմքրոպայի արտադրողական ուժերը, — պրում և Տրոցկին, — զաղարել են աճելուց... մենք ունենք ստագնացիա» («Պլան. հօգնութեա» 1925 թ. № 6, էջ՝ 76): Իսկ մի այլ տեղ նա խոսում ե ընդհանրապես ժամանակակից կապիտալիզմի ստագնացիայի մասին: Այդ իր պրոգնոզի հականեղափոխական, մենշևեցյան եյտությունը չի կարողանում քողարկել: Հենց ինքը՝ Տրոցկին, յերբ ակավաղելով Մարքսի այն հայունի դրույթը, թե կապիտալիզմի արտադրողական հարաբերությունները զարդացման վորոշ աստիճանում դառնում են արտադրողական ուժերի համար կտապանք, նա հեղափոխական հեռանկարները կախման մեջ ե՝ դնում այնպիսի ալտերնատիվից՝ թե կապիտալիզմն առհասարակ ընդունակ է բացարձակապես զարդացնելու արտադրողական ուժերը, թե՝ վոչ: (Տե՛ս ոքինակ, նրա գիրքը՝ «Նոր հատակ»):

Սա հենց զարդարում մենշևելով ե, սոցիալիզմի ցհասունացած լինելու տեսության ջատագովում, վորովհետեւ ինչքան ել ուսում Տրոցկին իր «ստագնացիայի» մասին, փաստը մնում է փաստ, վոր գոյություն չունի իմակերիալիզմի ժամանակ արտադրողական ուժերի զարդացման ընդհանուր զաղարք: Տօյալ կապակցությամբ մենք անհրաժեշտ ենք հարարում առանձնապես ընդդեմ ստագնացիայի ապրուզեակական «տեսության» այլ կողմը: Դա միաժամանակ եյտափես լիովին համատեղելի յե կապիտալիզմի անհավասարաչափ զարդացման մարմող կորագծի, նրա թուլացման մասին յեղած արրցկիստական առասպելների հետ, վորովհետեւ այնուեղ, վորտեղ անզի ունի ընդհանուր նեխում, չի կարող խոսք լինել անհավասարաչափ զարդացման ուժեղացման, այդ զարդացման ընդհատվողականությանը զուգըրդ-

ված թոփչքաձեռւթյան մասին։ Այս իմաստով ստագնացիայի տեսություններ արտացոլում եւ հականեղափոխական Տրոցկու դիմողական դիրքը դեպի այն հատուկ տեղն ու վճռական նշանակությունը, վոր համի կապիտալիզմի անհավասարաշափ դարձացման որենքը իմպերիալիզմի ժամանակ։

Թիստ բնորոշ ե, թե ինչպիսի՞ կերպարանք ե ընդունում ստագնացիայի տեսության պրոֆեկտորի տակ անհավասարաշափ դարձացման որենքը մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակ, որինակ, Պրեորբաժենսկու մոտ, այն Պրեորբաժենսկու, վորը, ինչպիս նշեցինք, հավակնություն ունի ուղղելու Մարքսի «անհոգությունն» այդ առնչությամբ։ «Աշխարհի տընտեսական դարձացման ընդհանուր տեմպի դանդաղման պայմաններում, —ըրում ե նա, —զարդացումը վորոշ կետերում ընդհանուր առմամբ կանգ ե առնում, կամ նույնիսկ նկատվում ե ուղղրեսս... ուրիշ յերկրներում առաջանում են այնպիսի հարաբերություններ, վորոնց մոտ են հասարակ վերաբարձրության... յերրորդ կարգի յերկրներում տնտեսական դարձացման տեմպն ավելի արագ ե միջինհամաշխարհային տեմպից» («Զակար», եջ՝ 56)։ Այս լեյտմուտիվը այն ամենի, ինչ նա կամենում ե առել մեզ անհավասարաշափ զարդացման որենքի մասին։

Մինչդեռ, նա բնագ ել ժըստ չե ստագնացիայի տեսությանց շաղախով թիստ իր դիմոդներում։ Պրեորբաժենսկին գրում ե, վոր «վերելքի կոր դիմն ավելի ու ավելի թեքված և դեպի հասարակ արտադրությունը» (նույն տեղում, եջ 85—86), վոր տնտեսական աստիճանական զարդացումը կանգ ե տաել (եջ 96), հետո մոնոպոլիզմը վորակում ե վորպես «արտադրողական ուժերի դարձացումը իրանելու մշտական աղբյուր» և այլն։

Յեթե աչքի առաջ ունենանք այս ընդհանրացնող պնդումները ժամանակակից կապիտալիզմի մասին, ապա պարզ ե դառնում, վոր վոչ մի տեղ չի մնում կապիտալիզմի անհավասարաշափ դարձացման որենքին, նույնիսկ իր այն աննոռնի տեսքով, ինչպես ներկայացված ե «Պրեորբաժենսկու մոտ։ Յեզ հիրավի, ինչ անհավասարաշափ զարդացում կարող ե լինել այստեղ, վորտեղ չկա զարդացում, այլ կա միայն ընդհանուր անշարժու-

թյուն։ Ապա ուրեմն զարմանալի ի՞նչ կա, յերբ Պրեոքրաժենուկին, շնորհելով անգամ մի բառ ասել այս որենքի արտահայտության ուժեղացման և թոփչքաձեռւթյան մասին՝ խմբերի ալիզմի ժամանակ, առանց քաշվելու յերգեր և հորինում կապիտալիզմի ներդաշնակության մասին, վորը Պրեոքրաժենուկու դեղատոմով միայն կընդհատվի վոչ այլ կերպ, քան ավտոմատիկ փլուզումի լոգիկայով և, հետևապես, ճիշտ կլինի ասել, վոր յերբեք ել չի ընդհատվի։ Ահա թե վորտե՛ղ պետք ե վնասով Պրեոքրաժենուկին անհավասարաշափ զարգացման որենքի իսկական ժխտումը։

